

20.791

329 · 14

8 - 85



0 5 FEB 2007

29.141
8-80

3562

ԴՕԿՏ. Ե.ՖՐԱՆԳԵԱՆ

ՀԱՍԱՐԵԿԱԳԻՏԱԿԱՆ
ԻՏԻՊՆԵՐ

Հ. Յ. Դաշնակցութեան

ՍՕՅԻԱԼ-ՓԻԼԻՍ. ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԴՈՐՄԱՆ ՇՈՒՐՋԸ

ԲԱԳՈՒ

Տպարան «Արարես»

1917 թ.

15 JAN 2010

329.14

ԴՕԿՏ. Ե. ՖՐԱՆԳԵԼՆ

Փ - 85

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ԷՏԻԳՆԵՐ

21367

Հ. Յ. Դաշնակցության
ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍ. ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՂՈՒԹԵԱՆ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԶՈՒՐԶԸ



ԲԱԳՈՒ
Տպարան «Արամազդ»
1917 թ.

562

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԻՂԵԱԼԻ ԱՐԺԵՔԸ.

Մեր դարը գերազանցապէս սօցիալական պրօբ-
լէմների դար է: Հասարակական բնոյթ կրող հարցերն
են բռնում կենտրոնական տեղ: Հասարականացման
պրօցէսը խիստ արագ տեմպով առաջ է գնում կեան-
քի և գիտութեան բոլոր սահմաններում: Սօցիալական
փիլիսոփայութիւնը զգալապէս զբաւում է կենտրոնա-
կան տեղ փիլիսոփայական մտայղացութիւնների մէջ: Ան-
կասկած, փիլիսոփայական միտքն ևս չէր կարող միան-
գամայն զերծ մնալ այդ շեշտած հասարականացման
պրօցէսի գունաւորումից: Մեր դարում զուտ իմացա-
բանական և մեթաֆիզիքական որոնումները կարծես
թէ երկրորդ գծի վրայ են մղւում:

Այժմ արժեքների դար է: Այժմ արժեքների փի-
լիսոփայութեան յաղթանակի օրն է: Բաւական է
միայն մի թեթեւ ակնարկ ձգել մեր օրերի գերիշխող
փիլիսոփայական ուղղութիւնների վրայ, որ համոզու-
ենք մեր այդ մտքի ճշտութեան մէջ: Յիշենք վեր-
ջերս այնքան աղմկող փիլիսոփայական ուղղութիւնը՝
պրագմատիզմը, ապա Օսթլիի եկերգեցիկ գործնա-
կան փիլիսոփայութիւն, որ խօսում է անգամ իր փիլի-
սոփայութեան կասեցորիկ հրամայականի մասին:
Յիշենք, վերջապէս, օրւայ հերոսին, Հանրի Բերգսո-
նին, նրա ինտուիտիւ փիլիսոփայութիւնը, ինչպէս և
Ռիկերտի ու Վինգելբանդի արժեքների փիլիսոփայու-
թիւնը, որ այժմ արտակարգ արագութեամբ և մեծ
չափերով նւաճումներ է անում: Դեռ երկար կարե-



21367+

լի է այդպիսի ուղղութիւններէ շարքը շարունակել: Նօրմատիւ գիտութիւնները կամաց-կամաց առաջնակարգ տեղ են գրաւում. մի երևոյթ, որ շատ յատկանշանական է մեր դարի համար: Մեքենական-տեսական գիտութիւններն առհասարակ, մեքենական մտածողութիւնը այլևս գերիշխող և գունաւորող չէ: Մեքենականի հետ հաւասար, եթէ ոչ աւելի, գերիշխում է այժմ նօրմերի սիստէմը: Գնահատութիւն, ազատ և ակտիւ գործունէութիւն:—Ահա ժամանակի ոգին բնորոշող գծեր:

Կենտրոնական խնդիրն ինքը կեանքն է, կեանքի պրօբլէմը և ըմբռնումը: Մարդը կղզիացած չէ: Նա հասարակական մի կենդանի է: Նա կեանքում, հասարակութեան մէջ է ստանում իր հասարակական բարձր արժէքը և իմաստը: Նա ապրում, մնում, շնչում, մեծանում և գործում է այդ հասարակական կեանքի եռուն հարցերի շրջանակում: Կեանքը գնում է մարդու, հասարակական խմբակցութեան առաջ մի էական հարց: Նա չը պէտք է միայն լաւ հասկանայ այդ կեանքը՝ իր բոլոր կողմերով: Ո՛չ. նա ունի մի մեծ խնդիր ևս. հասկանալով և գնահատելով այդ կեանքը, նա պէտք է ձգտի միաժամանակ աւելի բարձրացնել և ազնւացնել կեանքը, հասարակական նոր և բարձր ձևեր ստեղծել, նոր և բարձր նօրմերի տակ դնել այն:

Այդ գնահատութեան և կեանքի նոր ու բարձր ձևերի ստեղծման հիմքում դրած է մեր իդէալը, իդէալի ըմբռնումը:

Ի՞նչ է իդէալը: Իդէալը մեր համոզումների, ըմբռնումների և տեսակէտների ձևակերպումն է, մեր

հասարակական, բարոյական, քաղաքական մասնակի նպատակների գումարն է, պարունակումը: Հասարակական իդէալի իդէան հասարակագիտութեան էական և վախճանական հարցն է, մի երիտասարդ գիտութիւն, որ իրաւամբ համարւում է գիտութիւնների պսակը և որն այնպէս նւաճումներ է անում ու զօրաւոր կուսաններ գտնում:

Մեծ է, անչափ մեծ հասարակական իդէալի արժէքը և նշանակութիւնը:—

Իդէալը մի լուսատու ջահ է, որ լուսաւորում է մեր կեանքի և գործունէութեան ուղին և ամեն մութ խորշեր: Իդէալն է մեր ղեկավար տեսակէտը հասարակական կեանքում և նրա բազմազան երևոյթների աշխարհում: Իդէալը մեր բոլոր քայլերի, մեր վարմունքի ղեկավար կանոնն է, չափանիշը: Առանց այդ հասարակական իդէալի՝ ոչինչ չի կարելի անել առհասարակ, անգամ առօրէական կնանքում: Առանց այդ լուսատու ջահի, հասարակական իդէալի, մեր ամբողջ կեանքը մի խարխափում կը լինի, մեր գործունէութիւնը՝ անպլանաչափ և աննպատակաւոր, նամանաւանդ աններդաշնակ և անհետևողական: Դեռ աւելին: Նման դէպքում մեր գործունէութիւնը կը լինի հակասական, քօսաայլին, մեր քայլերն՝ երերուն, անհաստատ, մեր աշխարհը՝ աղօտ և մշուշային:

Առանց այդ հասարակական իդէալի, մեզ համար հասկանալի չէ լինելու, թէ ինչու մենք այս կամ այն հասարակական հիմնարկութեան մէջ մասնակցում ենք, նպաստում նրա գոյութեան և ծաղկման, իսկ մի այլ հիմնարկութեան հանդէպ բացասական դիրք բռնում: Առանց այդ իդէալի մեզ համար միան-

գամայն անըմբռնելի կը մնայ, թէ ինչու այս հասարակական երևոյթը կամ շահութումը համարում ենք առաջադիմական, իսկ մի այլ երևոյթ կամ շարժում՝ յետադիմական:

Իդէալն է միաժամանակ մեզ հնարաւորութիւն ընձեռում այս կամ այն բարոյագիտական, փիլիսոփայական ուղղութիւնը գնահատելու, նրանց արժէքը որոշելու և մեր վերաբերումը պարզելու: Եթէ զուրկ լինենք իդէալի պարզ գաղափարից, եթէ չունենանք մի ընդհանուր սօցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողութիւն, այն ժամանակ շատ հեշտութեամբ և յաճախակի կը թեքուենք դէպի այս կամ այն մտայղացումը, այս կամ այն հասարակական աշխարհայեցողութիւնը:

✓ Իդէալը անցեալի, անցեալ բովանդակ կեանքի գնահատութեան լաւագոյն և միակ չափանիշն է, ներկայի ընդհանուր սկզբունքը, ապագայի պատկերը և ընթացքը լուսաւորող ջանք:

Սուսնց այդ իդէալի, ամբողջ անցեալ կեանքը, ազգերի ամբողջ պատմութիւնը մեզ կը ներկայանար մի քաօս, մի լաբլւրինթոս, մի վայրիվերում, խառնակ և անկարգաւորեալ աշխարհ: Իդէալի, ընդհանուր աշխարհայեցողութեան շնորհիւ է միայն հնարաւոր լինում այդ վայրիվերումը կարգի բերել, լաբլւրինթոսը որոշ սիստէմի ենթարկել և այդ խառնակ աշխարհի գանազան փուլերն որոշել:

Այդ իդէալն է միաժամանակ որոշում պատմութեան ամբողջ ընթացքը և նրա իմաստը: Որպէս կենտրոնական մի ջանք, իդէալի տեսակէտը լուսաւորում է ամբողջ պատմական աշխարհը: Պատմական

բոլոր փաստերը և եղելութիւնները այդ լոյսի տակ են քաշուում և գնահատութեան ենթարկւում ու իրենց տեղը բռնում: Ամեն մի պատմաբան, պատմական երևոյթները հետազօտող շատ լաւ պէտք է գիտնայ, թէ ինչո՞ւ այս կամ այն փաստը յիշում է, իսկ մի այլ փաստ ոչ միայն չի յիշատակում, անգամ չի էլ նկատում: Դա պատահականութեան արդիւնք չէ, այլ մեր իդէալի, ընդհանուր հասարակական աշխարհայեցողութեան արգասիք: Այսպիսի միաձոյլ և ընդհանուր տեսակէտով կատարւած աշխատանքը միայն կարող է գիտական որակելի: Հակառակ պարագային այդ աշխատանքը կը լինի մի կօնգլօմերատ, պէտքական և անպէտք պատմական տեղեկութիւնների և փաստերի մի հաւաքածու: Այդպիսի աշխատանքը լաւագոյն դէպքում կարող է դիտել որպէս հում նիւթ, բայց միանգամայն զուրկ գիտական արժէքից: Իդէալի, ընդհանուր աշխարհայեցողութեան արդիւնք է այն, որ մէկը պատմութիւնը բնորոշում է որպէս իդէալի յաղթանակ, հետևապէս այդ տեսակէտով էլ գնահատում ամբողջ պատմութեան ընթացքը: Մէկը այդ պատմութիւնը գնահատում է *սենսուական* տեսակէտով՝ ելակէտ ունենալով ժողովրդի տեսակէտով է դիտում ամբողջ պատմութիւնը և հումանիզմի յաղթանակը ցուցադրում պատմութեան գանազան դարաշրջաններում: Մէկը իրաւական, միւսը քաղաքական կողմն է շեշտում և ղեկավար սկզբունք համարում և այլն: Այդ բոլորն արդիւնք է իդէալի, կեանքի ընդհանուր ըմբռնման:

Այդպէս է իդէալի դերը նաև ներկայի և ապագա-

յի վերաբերմամբ: Իդէալի լոյսի տակ են արժէքաւորում երեւոյթները և փաստերը ներկայումս, ինչպէս և այն ուղին, որ ձգւում է մեր առաջ դէպի մօտաւոր և հեռավոր ապագան:

Անշուշտ, տարբեր է կեանքի իմաստը և խորհուրդը մէկի կամ միւսի համար, ինչպէս և տարբեր է նրանց իդէալը, ընդհանուր հասարակական հայեցակէտը: Բայց այդ չէր մեզ այժմ զբաղեցնողը: Մենք ուզում էինք այս էթիկոսում ցոյց տալ միայն իդէալի մեծ արժէքն ու նշանակութիւնն առհասարակ՝ առանց մտնելու դեռևս նրա բովանդակութեան վերլուծման մէջ:

II

ՊՐՕԳՐԷՍԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Պրօգրէսը հասարակագիտութեան ամենահիմնական և վախճանական հարցն է: Այս հարցի մասին դեռ գոյութիւն չ'ունի մի ընդհանուր հայեցակէտ: Տիրում են իրար միանգամայն տրամադծօրէն հակադիր բմբռնումներ: Այդպէս է դրութիւնը ոչ միայն պրօգրէսի բովանդակութեան տեսակէտից, այլև պրօգրէսի սոսկական գաղափարի վերաբերմամբ:

Այժմ մեզ զբաղեցնում է միայն պրօգրէսի գաղափարի որոշման հարցը: Պրօգրէսի գաղափարի պարզ որոշումը մի յայտնի չափով կը դիւրացնի նաև մեր յետագայ աշխատանքը, պրօգրէսի բովանդակութեան վերլուծումը:

Այստեղ ամենաէականը և զլխաւոր աշխատանքը կայանում է նրանում, որ պէտք է խնամքով եւ

գիտական սահմաններում մտալով՝ զատել պրօգրէսի գաղափարը համանման հասկացողութիւններից, սահմանորոշել այնպէս և այն չափով, որ չշփոթւի այլ գաղափարների հետ: Դիւրին գործ չէ այդ, անտարակոյս, նամանաւանդ պրօգրէսի գաղափարի վերաբերմամբ:

Մի գաղափար, որ ամենից շատ շփոթել են և շփոթում են պրօգրէսի գաղափարի հետ, դա էւօլյուցիան է: Հասարակագէտներից և սօցիալ-փիլիսօփաներից շատերն այս երկու հասկացողութիւնն առանց այլևայլութեան նոյնացնում են: Դեռ աւելին: Էւօլյուցիայի տեսաբանները, մի Օգուստ Կօստ, մի Հերբերտ Սպենսեր, խուսափում են անգամ պրօգրէս բառի գործածութիւնից: Իսկ մինչև XVIII դարը չկար պրօգրէս տերմինը: Այդ գաղափարը շատ էլ երկար պատմութիւն, շատ էլ մեծ անցեալ չունի:

Որ այդ երկու հասկացողութիւնները, պրօգրէսը եւ էւօլյուցիան, նման, շփման կէտեր ունին, այդ մեզ համար ևս անկասկած է: Բայց այդ դեռ չի նշանակում նոյնութիւն:

Թէ պրօգրէսի և թէ էւօլյուցիայի գաղափարի հետ սերտօրէն կապւած է փոփոխումն հասկացողութիւնը: Գիտենք, որ փոփոխութիւնը կազմում էւօլյուցիայի ամենատէական յատկանիշը: Առանց դրան ինքնին անիմաստ, սնամէջ կդառնայ այդ հասկացողութիւնը: Փոփոխութիւնը կազմում է նոյնպէս պրօգրէսի յատկանիշներից մէկը: Մի անշարժ և անփոփոխ դրութիւն չի համարւում պրօգրէսի:

Բայց պրօգրէսը աւելին է, քան սոսկական փոփոխութիւնը և շարժունութիւնը, ձևափոխութիւնը և

յաջորդական զարգացումը: Պրօգրէսի գաղափարը նախ և առաջ ներքնապէս և անքակտելիօրէն կապւած է հասարակական իդէալի ըմբռնման հետ: Այս դրութիւնը մեզ համար անտարակոյս է: Պրօգրէսը արժեքաւորման, գնահատութեան արգասիք է: Այս յատկանիշով արդէն էական տարբերութիւն է դրւում այդ երկու հասկացողութիւնների մէջ: Ճիշտ է, որ ամեն մի պրօգրէս փոփոխութիւն է: Բայց ճիշտ չէ այդ մտքի շրջումը, այսինքն, թէ ամեն մի փոփոխութիւն պրօգրէս է:

Դիտենք, որ էւօլիւցիան մի սոսկական պրօցէս է, մի յաջորդական և աստիճանական փոփոխութիւն: Այդ փոփոխութիւնը միշտ էլ չի կատարւում դէպի առաջ, այլ և դէպի յետ: Էականը այստեղ ձևափոխումը, կերպարանափոխումն է:

Էւօլիւցիայի սկզբունքը հանձարեղ կերպով վաղուց արդէն ձևակերպել է Հերակլիտը: Ամեն ինչ հոսում է: Ահա նրա հիմնական տեսակէտը: Բոլոր իրերը մշտական փոփոխւում, դառնալու պրօցէսին են ենթակայ: Իրերի, աշխարհի այս յարաշարժ փոփոխութիւնից, այս ձևափոխութիւնից դուրս ոչինչ գոյութիւն չունի: Չկայ դադար, քաբացած վիճակ: Զրեբը ձևափոխւելով կազմում են սառցային լեռներ, իսկ լեռները կերպարանափոխւելով դառնում են հեղուկ, և այսպէս անվերջ:

Էապէս նոյնն է ասում նաև XIX դարի մեծ հասարակագէտը, էւօլիւցիայի սկզբունքի հանձարեղ տեսաբանը, Հերբերտ Սպենսէր: Անտարակոյս, այդ երկու մտածողների էւօլիւցիայի ըմբռնման մէջ որոշ տարբերութիւն կայ: Բայց մեզ այժմ այդ տարբերութիւնը չէ, որ զբաղեցնում է: Մեզ հետաքրքրում

է էական նմանութիւնը, այն, որ թէ մէկի և թէ միւսի համար կորիզը միևնոյնն է: Սպենսէրի համար էւօլիւցիան և տրանսֆօրմիզմը նոյնանում են: Իսկ այս վերջին կենսաբանական ընդհանուր հասկացողութեան տակ դրւած է ձեւափոխութեան սկզբունքը: Դա մի անհսրակաս, աննպասակաւոր պրօցէս է, մի փոփոխութիւն՝ պարզից դէպի բարդը, միատարրից դէպի բազմատարրը: Ուրեմն, էւօլիւցիայի պրօցէսը վերջին հաշւում ներկայանում է երևոյթների մի սոսկական քաղաքացում, ուրիշ ոչինչ: Իսկ թէ բարդացման այդ պրօցէսը նպատակաւոր կերպով տանում է դէպի աւելի բարձր, աւելի կատարեալ ձևեր և արժէքներ՝ անհատական և հասարակական կեանքում, դա արդէն չի բղխում այդ պրօցէսի էութիւնից: Բարդացման, կերպարանափոխման պրօցէսը զոռս մեխանիզմն է:

Պրօգրէսի գաղափարը այդպէս չէ: Պրօգրէսի գաղափարն ենթադրւում է մի իդէալական դրութեան գոյութիւնը: Իսկ իդէալն իր հերթին կապւած է ոչ միայն աւելի բարձր և կատարեալ ձևերի, այլ և արդար հասարակարգերի ու արժէքների հասկացողութեան հետ: Այսպիսով իդէալը, հետևապէս նաև պրօգրէսը, ստանում է քաղաքական արժեք: Եւ իսկապէս, պրօգրէսը մի արժեք է, մի ևօր, բայց երբէք մի սոսկական պրօցէս: Այստեղ դրւած է երևոյթների նշանակութեան սուբիեկտիւ գնահատութեան սկզբունքը: Այդ սուբիեկտիւ գնահատութեան արդիւնք է՝ թէ մենք երևոյթների այս կամ այն պրօցէսը, ինչպէս պատմական եղելութիւնների ընթացքը, պրօգրէս ենք համարում թէ ոչ: Արդէն անցեալ անգամ ասացինք,

որ այն հարցը, թէ այս կամ այն պատմական երևոյթը առաջագիմական է թէ յետադիմական, լիովին կախած է մեր իդէալի ըմբռնումից: Իսկ այդ իդէալը չի հետևում, չէ բղխում անհրաժեշտօրէն երևոյթների բնական մեքենական ընթացքից, ոչ էլ պատմական փաստերի սոսկական շարքից: Այստեղ նոր տարր, նոր մօմենտ է աւելանում: Դա սուրբիեկտիւ գնահատական տարրն է: Հետևապէս, միայն երևոյթների բնական ընթացքի, պատմական փաստերի և եղելութիւնների սուբիեկտիւ գնահատութիւնից է բղխում պրօգրէսի արժէքը:

Այստեղ, ինչպէս տեսնում էք, կայ նպասակաբանական տարրը, նպատակի տեսակէտը: Պրօգրէսի գաղափարը միշտ էլ անբաժան է այս տարրից: Այդ էլ կազմում է պրօգրէսի գաղափարի յատկանիշներից մէկը, մի գիծ, որ նոյնպէս բաժանում է էւօլիւցիա գաղափարից: Էւօլիւցիա գաղափարին խորթ, օտար է այդ տարրը, էւօլիւցիան մի աննպատակաւոր պրօցէս է: Պրօգրէսը լինելով մի արժէք, նա միշտ էլ իր մէջ պարունակում է մի որոշակի տենդենց, մի նպատակաւոր ձգտում դէպի բարձր արժէքներ, դէպի նոր և աւելի կատարեալ դրութիւն, որ հակադրւում է տիրող վիճակին, ներկայ հասարակական ձևին, կարճ՝ դէպի սօցիալական իդէալը:

Այս բոլորի հետ միանում է բնականօրէն նաև ցանկաշիւութեան եւ հետադարձութեան հարցը: Մարդը՝ որպէս հասարակական և բարոյական արժէքների կրօնող՝ չի գոհանում միմիայն երևոյթների, պատմական փաստերի ընթացքով, նրանով, ինչ տւեալ է, այլ նա այդ ընթացքը անողոք գատաստանի, անվերապահ

գնահատութեան է ենթարկում, ելակէտ ունենալով իդէալի տեսակէտը, այն դրութեան տեսակէտը, որ ցանկաշի է, որ պէտք է լինի: Այս վերջին խօսքերով երևան է հանւում մի նոր մօմենտ, մի նոր գիծ ևս: Անդրօսմունքեան տարրն է այդ: Կրաւորական պրօգրէսի հաւացողութիւնը նոյնքան անհնարին և անխմատ է, որքան առանց սուբիեկտիւ գնահատութեան: Կան էւօլիւցիօնիստներ, որ հէնց այս ձևով էլ տարբերում են պրօգրէս և էւօլիւցիա գաղափարները: Պրօգրէսը նրանք ըմբռնում են որպէս ակտիւ էւօլիւցիօնիզմ, և այդ ըմբռնումը հակադրւում են մեքենական, նատուրալիստական էւօլիւցիօնիզմին:

Պրօգրէսը, ուրեմն, մի փոփոխութիւն է, մի զարգացում, որ դիմում է միշտ դէպի աւելի բարձր և կատարեալ ձևեր, դէպի կատարեալ և արդար հասարակական կարգեր, կարճ, որ առաջագիմում է մի ուղիով, որ տանում է դէպի մեր իդէալը: Պրօգրէսը մի արժէք է, պատմական ընթացքի, բոլոր երևոյթների յաջորդական և յետևողական կերպարանափոխումների նշանակութեան սուբիեկտիւ գնահատութիւնը:

Անգամ Հանրի Բերգսօնի էւօլիւցիայի ըմբռնումը զուրկ է այդ տարրերից, որքան էլ նա էւօլիւցիայի սկզբունքը որակում է ստեղծագործական: Նա ներբողում է միայն այն, ինչ կենդան, շարժուն է, կեանքն առհասարակ: Բայց նա չի ներբողում կեանքի կատարեալ և բարձր ձևեր: Ճիշտ է, էւօլիւցիան ստեղծագործական է և ստեղծագործում է միշտ էլ կեանքի նոր և նոր ձևեր, բայց նա չի ստեղծում անպայման բարձր և կատարեալ ձևեր: Բերգսօնի

ստեղծագործական էւօլիւցիան այդպիսի արժէք չի ներկայանում: Այդ ստեղծագործումը, այդ յաւիտեանական ձեւափոխումը չի շարժւում մի ծրագրւած իդէալի ուղղութեամբ: Մինչդեռ պրօգրէսի դադափաւրը, ինչպէս արդէն մի անգամ նկատել ենք, սերտօրէն կապւած է հասարակական իէալի հետ:

Եթէ մեր սօցիալական իդէալն է, օրինակ, մարդկային համերաշխ և ներդաշնակ համայնակեցութիւնը, այդ համայնակեցութեան բարոյական հիմքն ընդունելով մանդկութեան բոլոր անդամների հաւասար իրաւունքը բազմակողմանի և ներդաշնակ զարգացման վերաբերմամբ, այն ժամանակ հասարակական նոր ձևերի և կարգերի փոփոխութիւնը, ինչպէս և պատմական բնական ընթացքն այն չափով է որպէս պրօգրէս ներկայանում, ինչ չափով նա առաջադիմում է մեր այդ սօցիալական իդէալի ուղղութեամբ: Իսկ ընդդէմ է, ընդհակառակը, ամեն մի ձև, որքան էլ այդ ձևը նոր լինի, եթէ նա մեր էդէալին չի համապատասխանում կամ ուղղակի հակասում է:

III

ՊՐՕԳՐԷՍԻ ՆՊԱՏԱԿԸ ԿԱՄ ՄԵՐ ԻԴԷԱԼԸ

Պրօգրէսի դադափարի որոշումից յետոյ, այժմ մեր առաջ բարձրանում է մի աւելի դժւարին խնդիր՝ պրօգրէսի նպատակի, նրա բովանդակութեան որոշման հարցը:

Այս խնդրի վերլուծումն աւելի դժւար և բարդ է, որովհետև դրա հետ էապէս և անբաժան կերպով կապւած են մեր բոլոր տենչերը և ցանկութիւնները,

մեր բոլոր բարոյական հասկացողութիւնները և նպատակները: Այս խնդրի շուրջը, անկասկած, աւելի են բաժանւում կարծիքները և շատ աւելի մեծ է տարբերութիւնը, քան պրօգրէսի գաղափարի վերաբերմամբ:

Յաճախ և ընդհանուր ձևով վերցրած որպէս պրօգրէսի նպատակ համարում են մարդու երջանկութիւնը: Բայց այս, երջանկութեան հասկացողութիւնը, շատ առաձգական է: Իւրաքանչիւր մարդ, ամեն մի հասարակական խմբակցութիւն իր յատուկ ձևով է ըմբռնում և հասկանում երջանկութիւնն առաձգելով: Այդ դրութեան իլլուստրացիայի համար մենք կարող ենք առաջ բերել փիլիսոփայութեան, յատկապէս բարոյագիտութեան և կրօնների պատմութիւնից մի շարք տարբեր, իրար ժխտող ըմբռնումներ երջանկութեան մասին: Դրութիւնը էապէս շատ քիչ կը փոխւի, եթէ անգամ աւելացնենք, թէ երջանկութեան չափանիշը համարւում ենք հաճոյքի, ուրախութեան աւելացումը կամ բացասական ձևով արտայայտած՝ տանջանքի նւազումը: Որ երջանկութիւնը և պրօգրէսի ըմբռնումը սերտ կերպով կապւած են իրար հետ, այդ մեզ համար ևս միանգամայն անտարակուսելի է: Բայց էական խնդիրը սա չէ, և սրանով կնճիւղը չի լուծւում:

Իսկապէս, ինչու՞ն է կայանում մարդկութեան երջանկութիւնը, պրօգրէսի վախճանական նպատակը: Տեսեալայես, իրաւալայես եւ բարոյալայես ազատ ինքնօրէն մարդկութեան գաղափարն է կազմում մեզ համար պրօգրէսի վախճանական նպատակը: Դրա մէջ ենք մենք տեսնում միաժամանակ մարդու երջան-

կութիւնը: Մարդ-անհատը երջանիկ է, երբ նա տընտեսապէս, իրաւապէս և բարոյապէս ազատ է և կատարելապէս ինքնօրէն:

Երջանկութեան մեր այս ըմբռնումը և պրօգրէսի վախճանական նպատակը կարող է մարմին ստանալ միմիայն այն հասարակարգի մէջ, որի հիմքում դրւած է համեմատաբար սկզբունքը:

Որո՞նք են այդ հասարակարգի յատկանիշները: — Համերաշխ համայնակեցութեան մէջ նախ և առաջ չի թագաւորում սանձարձակ մրցումը, անագորոյն գոյամարտը: Մարդիկ չեն բզկտում, ծւիկ-ծւիկ անում իրար: Մարդը մարդու համար գայլ չէ: Մարդկութեան մի մասը չի ապրում և զարգանում միւսի հաշւին, շահագործում նրա ոյժը և ամբողջ հոգին, յափշտակում նրա քրտինքի աշխատանքը: Այդ հասարակարգի մէջ մարդիկ հեծն չեն վազում հարլտանալու ետևից: Այդտեղ մարդը, այս Աստուծոյ պատկերը, սոսկական «ապրանքային արժէք» չէ, մի «եռուն գործիք» գործարանում:

Ներդաշնակ և համերաշխ համայնակեցութեան, սոցիալիստական հասարակարգի հիմքում դրւած է մէկը բոլորի եւ ամենի մէկի համար մեծ և սրբազան սկզբունքը: Ի՞նչ է թելադրում այս սկզբունքը: — Տեղի է տալիս գոյութեան կռիւը փոխադարձ օգնութեան և հասարակական աշխատանքը կատարւում է ընդհանուր շահերի հոգի վրայ: Մարդկութեան բոլոր անդամները համարժէք են և դրւած հաւասար պայմանների մէջ: Ազատ մարդու բազմակողմանի, ներդաշնակ զարգացումը միանգամայն ապահովւած է: Ամեն մէկը հնարաւորութիւն ունի ազատօրէն զար-

գանալու՝ ժիզիխապէս, մշառաւապէս եւ բարոյապէս: Այսպիսի պայմանների մէջ միայն մարդը դառնում է իսկապէս մարդ, այս բառի իսկական իմաստով վերցրած, որպէս բարոյական արժէք: Մարդ-անհատը դադարում է այլևս դիտել որպէս «ապրանքային արժէք», մի աւտոմատ, յեղաթիւրւած մի էութիւն: Նա դառնում է մի ամբողջացած եւ ներդաշնակ անհատ: Այսպէս են ըմբռնել և իրենց հեռաւոր իդէալը նկատել Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրները և ղեկավարները: Այս կէտը մեծ փայլ ունի և բնորոշ է Հ. Յ. Դաշնակցութեան հասարակագիտական աշխարհայեցողութեան տեսակէտից:

Մեզ համար մարդ-անհատը միայն միջոց չէ: Ոչ մի հասարակագիտական վարդապետութիւն չի կարող մեր պրօգրէսի, մեր իդէալի պահանջներին բաւարարութիւն տալ, եթէ նա մարդը դիտում է որպէս շոկ միջոց: Մեր սոցիոլոգիական ըմբռնումով հասարակութիւնը մի օրգանիզմ չէ, ինչպէս ուսուցանում է օրգանական տեսութեան տաղանդաւոր ներկայացուցիչը, Սպենսէրը, ըստ որի անհատը հասարակութեան մէջ հաւասարւում է մի բջիջի: Հասարակութիւնը, ընդհակառակը, մի կազմակերպութիւն է համարժէքի և համահարաւորութեան, որոնք հաւասարապէս վայելում և տանջւում են, պայքարում և ապրում: Մեր սոցիալ-փիլիսոփայութեան տեսակէտով անընդունելի է հասարակութեան առաջնութիւնը անհատի հանդէպ: Հասարակութիւնը մի կողմից և անհատները մի կողմից՝ փոխադարձաբար պայմանաւորում են իրենց արժէքը: Բայց չծանրանանք այս կէտի վրայ: Այս կարևոր հարցի վերաբերյալ հետագայում անհրաժեշտ է քննարկել:



ձին գլուխ:

Անհատը հասարակութեան մէջ չպէտք է դիտուի միայն որպէս միջոց: Նա միաժամանակ նպաստակ է: Մեր սօցիալական և բարոյական տեսակէտով, կատարեալ և ներդաշնակ է այն հասարակարգը միայն, ուր մարդ-անհատը այն չափով է միջոց, ինչ չափով նա միաժամանակ նպատակ է:

Ազատ և ինքնանպատակ մարդու սկզբունքը իր կլասիկ բանաձևումներով աւել է արդէն Քեօնիգսբերգի մեծ մտածողը, Կանտը: Մարդը ինքնանպատակ է: Ոչ մի դէպքում և ոչ ոքի համար մարդ-անհատը չպէտք է դիտուի որպէս միջոց, միմիայն որպէս միջոց: Նա ամեն դէպքում և ամեն մէկի համար պէտք է լինի միաժամանակ որպէս նպատակ:

Մեր խօսքը, անշուշտ, չէ վերաբերում վերացական մարդուն, այլ իրական անհատին: Մարդը հասարակական իր իդէալի չունէտը և վերջակէտն է միաժամանակ: Այս տողերում շեշտում է մեր հասարակագիտական աշխարհայեցողութեան ինդիւիդուալիստական կողմը: Բայց այստեղ ինդիւիդուալիզմը վերցւած է որպէս բարոյագիտական խնդիր: Այսպիսով, հարցն ստանում է բարոյագիտական բնանորոթիւն: Պրօգրէսի նպատակը, սօցիալական մեծ իդէալը գերազանցապէս բարոյական արժէք է:

Այսպէս, մենք եկանք հետեւեալ եզրակացութեան, որ պրօգրէսի վախճանական նպատակն է *slushness*, խառապէս և քառոյսպէս ազան ու ինքնօրէ մարդկութեան իդէալ: Իսկ այսպիսի բնկերային կարգերի մէջ միանգամայն ապահոված է անհատի ինքնանպատակ արժէքը:

Մեր այս սօցիալական պրօգրէսի հետ կապւած է նաև մեր երջանկութեան գաղափարը: Այս երկու հասկացողութիւնները, ինչպէս էլի ասել ենք, անբաժան են իրարից:

Բայց ինչպէս կարելի է ստեղծել նման հասարակութիւն, ներդաշնակ և համերաշխ համայնակեցութիւն:

Միջոցների հարցի լուսագոյն պատասխանը տալիս է ինքը պատմութիւնը: Մի միջոցը—և ամենահատու միջոցը—դասակարգային կօիւն է:

Այս է ուսուցանում մեզ պատմութիւնը: Կանգնած լինելով մարդկութեան աշխատաւոր մեծամասնութեան շահերի տեսակէտի վրայ, մենք պայքար ենք մղում դասակարգային անհաւասարութեան, մի դասակարգի իրաւական, քաղաքական և անտեսական գերիշխանութեան, հետեւապէս, շահագործման դէմ:

Ուրեմն, մեր կօիւր աւելին է, քան սոսկական դասակարգային պայքարը: Մեր պայքարը ուղղւած է հենց դասակարգերի դէմ, աշխատելով վերացնել դասակարգային անհաւասարութիւնը և մարմնացնել, իրականացնել ազատ և ինքնօրէն մարդկութեան գաղափարը ամենալայն մտքով:

IV

ՊՐՕԳՐԷՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պրօգրէսը մենք բնորոշեցինք որպէս մի զարգացում, որ առաջ է շարժւում մեր հասարակական իդէալի ուղղութեամբ:

Այժմ մեզ զբաղեցնում է պրօգրէսի անհրաժեշտ պայմանների հարցը, պայմանների, առանց որոնց առաջադիմական շարժումը միշտ էլ կարող է խանգարւել:

Որոնք են այդ պայմանները: —

Արդէն գիտենք, որ պրօգրէսը կրաւորական չէ: Փատալիզմը տեղ չունի այստեղ և նա հիմնապէս սխալ ըմբռնում է: Չկայ օրինկտիւ նպատակաբանութիւն, բնութիւնը չունի գիտակցական, նպատակաւոր իդէալներ: Մարդը բնութեան նպատակը չէ: Կայ միայն սուբիեկտիւ նպատակաբանութիւն: Դա պարզապէս մարդու, իրական մարդու տեսակէտն է: Պրօգրէսը գերազանցապէս ներգործոն է: Առանց սրան անհասկանալի է հասարակական պրօգրէսի գաղափարը: Այստեղ դրւած է սուրիեկտիւ գնահատութեան սկզբունքը: Իսկ այս վերջին հասկացողութեան հետ էլ կապւած է ակտիւ միջամտութեան տեսակէտը:

Բայց ակտիւ միջամտութիւնը ինքնին դեռևս պրօգրէսիւ չէ: Այդ միջամտութիւնը, ակտիւ գործունէութիւնը միմիայն պրօգրէսի մի պայմանն է: Դրանից ոչ աւելի: Ակտիւ գործունէութիւնը միայն այն դէպքում առաջադիմական կը համարւի, երբ ուղղւած կը լինի մեր իդէալին, հասարակական արդար և կատարեալ կարգերի ստեղծագործութեան:

Այստեղ, ինչպէս դժւար չէ նկատել, աւելի կարեւորը և էականը ուղղութիւնն է, քան ինքն ակտիւ գործունէութիւնը: Մի ակտիւ միջամտութիւն հասարակական գործերի մէջ յաճախ լինում է ոչ թէ առաջադիմական, այլ յետադիմական:

Այս առումով կարելի է յիշատակել մի շարք ագլակներ, որոնք ինքնըստինքեան պրօգրէսիւ չեն, բայց կարող են պրօգրէսի պայմաններ նկատուել:

Ահա մարդկային, անհատական մտքի զարգացումը, այդ զարգացման հետ կապւած մի շարք երևոյթներ—գիտական նշանումները, գեղագիտական ստեղծագործութիւնները, փիլիսոփայական յղացումները և այլն: Այս բոլորը կազմում են հասարակական պրօգրէսի անհրաժեշտ պայմանները: Բայց դրանք ինքնին, անպայման պրօգրէսիւ չեն: Մի փիլիսոփայական յղացում ինքնին, բացարձակապէս դեռևս պրօգրէս չէ: պրօգրէս լինելը կախւած է ստեղծագործութեան ուղղութիւնից, երբ այդ ստեղծագործութիւնը, մտայնացումը կատարւում և ազդում է մեր հասարակական իդէալի ուղղութեամբ:

Ո՞վ կարող է ժխտել, որ Տեխնիկայի զարգացումը առհասարակ պրօգրէսի պայման է, անգամ շատ կարևոր պայմաններից: Ո՞վ կարող է կասկածի ենթարկել, թէ մարդու կողմից բնութեան, բնական ոյժերի վրայ իշխելը մի նոյնքան անհրաժեշտ պայման է պրօգրէսի համար: Տեխնիքական գիւտերի, բնութեան գաղտնի ուժերի աստիճանական յայտնագործութիւնների շնորհիւ մարդը, սօցիալական այդ կենդանին աւելի ու աւելի ինքնօրէն է դառնում: Մենք չենք յամենայն դէպս, որ պէտք է տարակու-

սանքի ենթարկենք այս երևոյթը: Բայց, միւս կողմից, անդիտակցօրէն չպէտք է գերազնահատել այդ տեխնիքական գիւտերի հասարակական արժէքը: Կըրկնում ենք, դրանք միայն պրօգրէսի պայմաններ են, անհրաժեշտ և կարևոր պայմաններ անշուշտ: Բայց երբէք դրանից աւելին: Յայտարարել դրանց անվերապահ կերպով որպէս պրօգրէս, կը նշանակէ կատարել մեծ սխալ:

Ընդունենք մի ըոպէ, որ մեր իդէալը մարդու երջանկութիւնն է: Եթէ սա է մեր խորհրդածութիւնների և գնահատութեան ելակէտը, ինչպէս կարող ենք մի տեխնիքական գիւտ, օրինակ, հենց օդաչու նաւերը, համարել ինքնին պրօգրէս, երբ դա՝ մարդկութեան երջանկութեանը չնպաստելով հանդերձ՝ միշտ էլ կախած է լինում նրա գլխին որպէս դամոկլեան սուր, երբ դա մարդկանց ծառայելու անխիղճ ու անյադ տենչի գործիք է միայն հանդիսանում:

Նա կը դառնայ կատարելապէս պրօգրէսիւ, երբ կը ծառայի միայն մարդկութեան երջանկութեան, բարօրութեան, վայելքի համար: Բայց այդ գիւտը, անկասկած, ինչպէս ամեն մի յայտնագործում, ինքնատիքեան պրօգրէսի պայման է: Մեր աշխարհայեցողութեամբ, մի զարգացում, մաքի նւաճում չի կարող երբէք բաւարարել մեր արդարութեան և բարոյական ըմբռնումներին, մեր սոցիալական իդէալի պահանջներին, եթէ այդ գիւտը, տեխնիքական կամ մտային զարգացումը, պայմանաւորած է մարդկութեան մեծամասնութեան դժբախտութեամբ: Այդպիսի զարգացման հասարակական արժէքը մեր աչքում միանգամայն նսեմանում է: Եթէ մի պայման, մի

յայտնագործում դառնում է բոլորովին շահագործման միջոց, նա չի կարող առաջադիմական հռչակել:

Մեր պրօգրէսի պահանջներին չի բաւարարում նոյնպէս ամեն մի կատարելութիւն: Մեզ համար պրօգրէս և կատարելութիւն հասկացողութիւնները նոյնանիշ չեն: Մեր վերևի խորհրդածութիւններն արդէն այդ էին սպացուցում: Այսօր բոլոր ժողովուրդներին շարժեցրել է համաշխարհային պատերազմը, որ ցուցահանեց ռազմական միջոցների և արւեստի ծայրայեղ կատարելագործութիւնը, հրազէնների հակայական կատարելութիւնը: Ահա Կրուպի գործարանի դժոխային գործիքը, 42 մատնաչափի ծանր թնդանօթները, անա Անգլիայի հնարած շարժական ամրոցը՝ զրահապատ աւտոմոբիլը, անա ստորջրեայ նաւերը...

Այսպիսի կատարելութեան և հասարակական պրօգրէսի մէջ կայ ամբողջ վիհ: Այս և նման կատարելութիւնը չարիք է միայն, սօցիալական չարիք, որի դէմ պէտք է պայքարել, և պայքարել ամենայն ոյժով:

Այսօր մի քանի ժամուայ ընթացքում տասնեակ հազարաւոր երիտասարդ ոյժեր են կտոր-կտոր լինում այդ հրազէնների կատարելութեան պատճառով:

Ժողովուրդների տնտեսական, արդիւնաբերական ոյժերի զարգացումն ևս կազմում է պրօգրէսի էական պայման և ազդակ: Բայց այստեղ նոյնը պէտք է կրկնել, ինչ միւս պայմանների վերաբերմամբ ասացինք:

Այն ժողովուրդը, այն երկիրը կարող է անսայթաք առաջ գնալ պրօգրէսի ուղղութեամբ, որն իր մէջ պարփակում է պրօգրէսի բոլոր պայմանները և թոյլ է տալիս նրանց ազատօրէն զարգանալու: Ժողո-

վրդի մեծամասնութիւնը այնպիսի պայմանների մէջ պէտք է գրւի, որ կարողանայ անկաշկանդ, ազատ կերպով զարգանալ, և զարգանալ նիւթապէս, մետաղապէս և քարոյապէս:

Ինչու՞ն է կայանում այս պայմանների հասարակական արժէքը:—Այստեղ ենթադրուում են մարդու նիւթական զարգացման նւագագոյն պայմանները, առանց որոնց մարդկանց կեանքը մի տանջանք է միայն, և զարգացումը մի դատարկ հնչիւն: Մտաւոր և քարոյական զարգացման հետ կապւած են նոյնքան մեծ պահանջներ: Մարդը ազատ է իր ինքնութիւնը կարծիքը, իր բարոյական համոզումներն ունենալու: Դեռ աւելին: Մարդ-անհատը պէտք է հնարաւորութիւն ունենայ ազատօրէն իր մէջ զարգացնելու խնայողական ունակութիւնը, քննադատական վերաբերումը դէպի հասարակական արժէքները և աշխարհի իրերը: Նա պէտք է ազատ լինի ամեն ժամանակ և ամենուրեք ճշմարտութեան և արդարութեան խօսքը բարձրաձայն ասելու: Այդ նրա սրբազան, անբռնաբարելի իրաւունքն է: Դրա մէջ է կայանում իսկապէս հասարակական էակի մարդկային բարձր արժէքը: Քննադատութիւնը, բարոյական համոզումների ազատ դաւանումը կազմում են պրօգրէսի կարևոր ազդակներէ: Ուր բացակայում են այս տարրերը, ուր չկայ քննադատութիւն, միշտ էլ կեանքը ենթակայ է քարացման վտանգին: Նա տաղտուկ է և միօրինակ: Ժողովուրդների պատմութիւնը տւել է—և տալիս է—այդ դրութեան ցայտուն օրինակներ, պերճախօս փաստեր: Ահա ձեզ ամբողջ միջին դարերը. բովանդակ մարդկութեան կրծքի և հոգու վրայ ծան-

րացած էր եկեղեցու դոգման: Ոչ ոք ազատ չէր այդ ճնշումից: Ազատ համոզումների ու քննադատութեան մասին և ոչ մի խօսք:

Մի ժողովրդի մէջ, ընդհակառակը, որքան աւելի են զարգացած մտքի քննադատական տարրը և ազատ համոզումները, այնքան աւելի ապահովւած է նրա առաջագիմութեան գործը: Մի խիստ նկատւած հոգեբանական երևոյթ է, որ մարդիկ միշտ էլ մի առանձին հակում են ցոյց տալիս դէպի հին սովորութիւնները, տրագիցիաները, որ վերին աստիճանի վտանգաւոր է մի ժողովրդի համար: Շատ անգամ այդ տրագիցիաներն ստանում են հասարակական չարիքի կերպարանք: Յաճախ մտքի անօրինակ թափ և երկար ժամանակ է անհրաժեշտ լինում այդ հասարակական չարիքի դէմ պայքարելու և նրան յաղթահարելու համար:

Այդպիսի քարացումը կանխելու համար, միշտ էլ պէտք է վերադնահատութեան և անխնայ քննադատութեան երթարկել հին սովորութիւնները: Ինչ խօսք, որ այդ քննադատութիւնը և վերադնահատութիւնը պէտք է կատարւի միշտ էլ աւելի կատարեալ և արդար հասարակական կարգերի, կարճ, մեր՝ մշտապէս զարգացող՝ սօցիալական իդէալի տեսակէտից: Այդ շարունակական քննադատութիւնից և վերաբժեշտութեամբից ոչինչ ազատ չպէտք է լինի:

Այստեղ, անտարակոյս, արտօնեալ անհատների հարց չէ դրւած: Այդ պայմանները պէտք է տարածւեն մարդկութեան բոլոր անդամների վրայ: Նրանք հաւասարապէս պէտք է աշխատեն և հաւասարապէս վայելեն: Նրանցից ոչ մէկը չպիտի ապրի և զարգա-

նալ միւսի հաշին: Նրանց ամբողջ գործունէութիւնը ուղղւած է լինելու մի կէտի—ստեղծել և ուժեղացնել հասարակական համերաշխութիւնը: Պրօգրէսի բոլոր պայմանները պէտք է ստանան այս ուղղութիւնը և ծառայեն հասարակական համերաշխութեան ուժեղացման:

Ուր այս ուղղութեամբ է գործ կատարւում և ուր կան պրօգրէսի վերև յիշած պայմանները, այնտեղ միանգամայն ապահովւած է պրօգրէսը:

V

ՊԱՏՄԱԿԱՆ ՊՐՕԳՐԷՍ

Կայ պատմութեան մէջ պրօգրէս:

Ահա մի կարևոր և հետաքրքրական պատմա-փիլիսոփայական հարց: Շատ սօցիոլոգներ, պատմաբաններ է զբաղեցրել այս հարցը:

Ի՞նչ են ասում նրանք:

Նրանց պատասխանները, անկասկած, միեմպամայն տարբեր են, իրար ժխտող:

Նախ, այս հարցը ինքնին անարժէք, անիմաստ է բոլոր նրանց համար, որոնք կանգնած են ֆատալիզմի տեսակէտի վրայ: Այն հայեցակէտը, թէ ամեն ինչ կատարւում է նախապահորէն, մի կոյր ոյժի ղեկավարութեամբ, ոչ մի առնչութիւն չունի պրօգրէսի գաղափարի հետ:

Վերև դրւած հարցը գոյութիւն չունի նոյնպէս այն պատմա-փիլիսոփաների և հասարակագէտների համար, որոնք՝ կանգնելով էւոլիւցիոնիզմի տեսակէտի վրայ՝ ընդունում են, թէ պատմութիւնը կատար-

ւում է ինքն իրեն և մարդն անկարող է իրան որևէ նպատակ դնել և իրագործել հասարակական կեանքում: Այսպիսի մտածողների համար պատմական պրոցէսը, պատմական սոսկական ընթացքը հոմանիշ է պատմական պրօգրէսին: Հետևապէս, միանգամայն անիմաստ է դաւնում այն հարցը՝ կայ արդեօք պատմութեան մէջ պրօգրէս: Նրանց համար կարևորը պատմական պրոցէսն է, իսկ թէ այդ պրոցէսը գնում է որոշ նպատակի ուղղութեամբ, դա բոլորովին անկարևոր և երկրորդական հարց է:

Ինչպէս տեսնում էք, տւած հարցման դրական կամ բացասական պատասխանը կախւած է այն հանգամանքից, թէ մենք ընդունում ենք հասարակական իդէալի գոյութիւնը: Եթէ մեզ համար գոյութիւն ունի այդպիսի իդէալ, բնականապէս, մենք պէտք է տեսնենք պատմութեան մէջ նոյնպէս պրօգրէս, մի շարժում դէպի մեր իդէալը: Այս իդէալը դառնում է մեզ համար պատմական պրոցէսի գնահատութեան չափանիշը: Իսկ թէ ի՞նչ է այդ իդէալը, մենք այդ արդէն գիտենք: Իդէալը մի արժէք է: Նա մեքենայական շարժման, բնական պրոցէսի ծնունդ չէ, այլ քացառապէս մարդկային գործօն, գիտակցական և նպատակաւոր գործունէութեան արգասիք: Մենք գիտակցաբար դնում ենք նոր և բարձր նպատակներ, ձգտելով միաժամանակ իրականացնել կեանքի մէջ: Իսկ այս բոլորի բնական արդիւնքը լինում է այն, ինչ մենք անւանում ենք պատմական պրօգրէս: Այսպիսի ըմբռնումով և նման գործունէութեան շնորհիւ պատմական պրոցէսը ստանում է իր իմաստը: Այդ իմաստը պրօգրէսն է: Պարզ է, որ մեզ համար պատ-

մական պրոցէս և պատմական պրօգրէս հասկացողութիւնները նոյնանիշ չեն:

Այսպէս մօտենալով հարցին, մեզ համար բոլորովին անկասկած է պրօգրէսի գոյութիւնը պատմութեան մէջ: Պատմութեան մէջ պրօգրէս ընդունում և ճանաչում է սօցիօլօգների և մտածողների ճնշող մեծամասնութիւնը, ինչպէս Կանտ, Հերդեր, Գեօթէ, Հերգել, Կոնտ, Սէն-Սիմոն, Ֆուրիէ, Օվէն, Պրուդոն, Մարքս, Զիմմել, Լաւրով, Միխայլովսկի և այլն:

Ոչ ոք, թէ հնումն և թէ այժմ, քաջատնայեալ չի ժխտում պրօգրէսը: Հնումն յստակ գաղափար չունէին պատմական պրօգրէսի, առհասարակ պրօգրէսի մասին: Պատմութիւնը դեռ ևս շատ և շատ հեռու էր գիտական կոչւելուց: Մի Հերոդոտ, մի Քսենոֆոնս դեռ ևս չունէին ընդգրկող, ամբողջական տեսակէտ պատմական երևոյթների մասին: Դեռ ևս գոյութիւն չունէին պատմահայեցողութիւններ, դրա համար էլ մենք ունէինք պատմական մասնակի դէպքերի, եղելութիւնների պարզ նկարագրութիւն, բայց երբէք նրանց ընդհանրացումը, կապակցած ամբողջութիւնը: Այստեղ իդէալը դեր չի խաղում:

Մինչդեռ միջին դարում մենք տեսնում ենք մասնակի դէպքերի և երևոյթների ընդհանրացում, հետեւապէս, որոշ պատմահայեցողութիւն, եկեղեցու հայրերի պատմահայեցողութիւնը, որի հետ շղկապւած է միաժամանակ որոշ իդէալ՝ եկեղեցական-կրօնական իդէալը:

Յետագայ ժամանակներում, յատկապէս Ժան-Փակ Ռուսսօն է հախառակ արտայայտել: Բայց նա չի ժխտում պրօգրէսը պատմութեան մէջ ամբողջա-

պէս: Նրա «Յեռ դեպի բնութիւնը» կոչը վերաբերում է միմիայն բարոյական քաղաքակրթութեան: Նա չի տեսնում պատմութեան մէջ միայն մարդկային բարքերի կատարելութիւն: Նոյնպիսի բնոյթ ունի նաև ոռւս մորալիստ Տոլստոյի յոռետեսութիւնը:

Ներկայ ժամանակում ոչ մէկի դիրքը այնպէս ժխտողական չէ դէպի պատմական պրօգրէսի գաղափարը, ինչպէս Վիէննայի յայտնի քաղաքատնտես-հասարակագէտ Կոմպլովիչի: Նա չի տեսնում պրօգրէս ոչ իմացականութեան և ոչ էլ մորալի ու սօցիալ-փիլիսոփայութեան սահմանում: Ազգերի, համաշխարհային ամբողջական պատմութեան մէջ ոչ առաջագիմութիւն կայ և ոչ էլ յետադիմութիւն: Մարդկային ինտելլեկտը 4000 տարի առաջ և այսօր՝ միևնոյնն է. չկայ էական տարբերութիւն: Իսկ սօցիալ-փիլիսոփայութեան բնագաւառում ոչ միայն չի նկատւում պրօգրէսի հետք, այլ առհասարակ չի տեսել որևէ նոր բան:

Ահա Կոմպլովիչի պնդումները և գլխաւոր մշտքերը:

Բայց նա ևս չի կամենում կատարեալապէս և բացարձակապէս ժխտել պրօգրէսը: Նա չի ուզում «այդքան հեռու գնալ»: Ինչո՞ւ: Որովհետև նրա համար ակներև և անտարակուսելի է պրօգրէս գիւտերի, յայտնագործումների սահմանում: Դեռ աւելին: Նա ճանաչում է պրօգրէս պատմական առանձին դարաշրջաններում: Սրանք արդէն շատ կարևոր և էական գիշումներ են: Ծիշտ է, այն, որ նա ճանաչում է պրօգրէս առանձին շրջաններում, չի տալիս պատմական պրօգրէսի գաղափարը, բայց յամենայն դէպս

այդ գիշումները էապէս խախտում են նրա գիրքը: Պատմական պրօգրէսի գաղափարի մասին այն ժամանակ միայն իսկապէս կարող է խօսք լինել, երբ միևնոյն իդէալն պատմութեան ընթացքում, պատմական դարաշրջանների միջով անցնում է կարմիր թելի նման:

Կայ և կարելի է մատնանշել պատմութեան մէջ այդպիսի գաղափարի գոյութիւնը: Այս հարցը էապէս նոյնն է, ինչ դրել էինք վերեւ՝ կայ պատմութեան մէջ պրօգրէս, որովհետև մենք այլ կերպ չենք ընդունում պատմական պրօգրէս հասկացողութիւնը, քան այդպէս: Իսկ մեր վերաբերումը դէպի այդ հարցը եղել է դրական:

Լուսցէ, Հերդեր և ուրիշները, ճանաչում են պատմութեան բոլոր դարաշրջաններում մարդկայնութեան, հումանիզմի իդէալի զարգացումը: Նրանց կարծիքով մարդկութեան առաջադիմութիւնը գնում է այդ իդէալի ուղղութեամբ: Նրանց համոզմունքով համաշխարհային պատմութիւնը այլ բան չէ, եթէ այդ իդէալի շարունակական, անընդհատ իրականացումը:

Լայքնիցն ընդունում է, որ աշխարհը գնում է դէպի լուր, և բարին է վերջնականապէս յաղթանակելու: Կանտը շեշտում է իմացականութեան վրայ և դրա յարաճուն յաղթանակը տեսնում:

Մեզ համար հասարակական հասկացողութեան գաղափարն է այդպիսին: Նա անցնում է պատմական բոլոր էպոխաների միջով: Նա հէնց այդ համերաշխութեան զարգացումը մեզ համար պրօգրէսի իսկական չափանիշն է:—

Արդէն արեւ ենք, որ համերաշխ և ներդաշնակ համայնակեցութեան հետ կապած է մարդու ֆիզիքական, բարոյական և մտաւոր ազատ զարգացումը: Իսկ մեր իդէալը, պրօգրէսի վախճանական նպատակն է կազմում տնտեսապէս, իրաւապէս և բարոյապէս ազատ և ինքնօրէն մարդկութեան իդէան: Այս իդէան մենք տեսնում ենք ազգերի ընդհանուր պատմութեան բոլոր դարաշրջաններում, մի տեղ պակաս և մի այլ տեղ աւելի գիտակցական: Մարդկութեան մի խոշոր մասը գնելով իրեն այդ նպատակը, ձգտում է այն իրականութիւն դարձնել և ժողովուրդներն ու ազգերը մղել դէպի այդ իդէան:

Ամբողջ սերունդներ են պայքարել, դժւարին և մշտական կռիւ մղել այդ իդէայի յաղթանակի համար: Այսօր էլ սերունդները աւելի ուժեղ թափով և կազմակերպւած, հաւատով և յաղթական, կռիւ են մղում այդ մեծ իդէայի, պրօգրէսի մեծ ճանապարհի վրայ:

Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը հսկայական դարկ տւեց այդ իդէայի զարգացման, ստեղծեց կարիքը պայմաններ մեր հասարակական պրօգրէսի համար:

Իսկ այսօր, այս համամարդկային գոյամարտի միջոցին մի բոլեթ թւաց, թէ պատմութիւնը յետ-յետ է գնում դարերով. պրօգրէսը մի պատրանք է միայն, ինչպէս և պատրանք է մարդկութեան, աշխատաւորութեան համերաշխութեան իդէան:

Բռնկեց Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը այնքան անսպասելի և այնքան արագ: Նա ցնցեց ամբողջ մարդկութիւնը և գալիս է հարթելու այն արիւնոտ ուղին, որ տանում է դէպի տնտեսապէս, իրաւապէս

և բարոյապէս ազատ ու ինքնօրէն մարդկութիւնը:

Այն, եղել են պատմութեան մէջ, ազգերի կեանքում անկման և մռայլ շրջաններ, այս և այն ժամանակ արգելք է յարուցել այդ իդէալի առաջ, բայց դա եղել է միայն ժամանակաւոր: Վերջնական յաղթանակը մնացել է նրա կողմը: Իսկ այս է մեզ համար ամենակարեւորը:

Շատ հասարակագէտների և պատմաբանների զբաղեցրել է, և զբաղեցնում է, հասկ պատմական պրօգրէսի շարժման տեսակի և ձևի հարցը: Արդեօք պրօգրէսը ուղիղ գծով է առաջ շարժւում, թէ այլ տեսակի է այդ շարժումը: Առհասարակ դժւարանում են այս հարցին որոշ և վերջնական պատասխան տալ: Պրօգրէսը, որպէս շարժում և զարգացում, պարզ բնոյթ չունի: Յամենայն գէպս անկասկած և գիտական է այն, որ պրօգրէսը պատմութեան մէջ չի ընթանում ուղիղ գծով: Աւելի շուտ պրօգրէսը պատմական դաբաշրջանների միջով շարժւում է զիգ-զագ-ներով, ոլորապտոյտ ձևով:

Իսկ այս բոլորի հանդէպ աւելի ճշմարտապատում և գիտական պէտք է համարել այն դրութիւնը, որ պատմական պրօգրէսի բնոյթը շատ ու շատ բարդ է, հետեապէս, վերին աստիճանի դժւար է այս կամ այն գծով բնորոշել պրօգրէսի շարժման ձևը և տեսակը: Դժւար է մանաւանդ այդ ձևն ընդհանուր համարել պատմութեան բոլոր զարաշրջանների համար:

Մեզ համար աւելի կարեւորը այն հանգամանքն է, որ պատմութեան մէջ կայ և տեսնում են պրօգրէս:

VI

ՍՕՑԻԱԼԻԶՄ ԵՒ ԻՆԴԻՒԴՈՒՍԼԻԶՄ

Վերադառնում ենք մի հարցի վերլուծման, որ անցողակի շօշափել ենք արդէն:

Սօցիալիզմի և ինդիւիդուալիզմի փոխյարաբերութեան խնդիրն է այս: Մենք ասել ենք, որ սօցիալիստական հասարակարգն է մեր վախճանական իդէալը: Եւ, միւս կողմից, կցել դրան, թէ մարդ-անհատն է կազմում մեր հասարակական իդէալի չուկէտն ու վերջակէտը միաժամանակ, ուր, հետեապէս, ընդգծւում է մեր հասարակադիտական աշխարհայեցողութեան ինդիւիդուալիստական գիծը:

Այստեղ գոյութիւն չունի արդեօք որեւէ հակասութիւն:

Սովորաբար ինդիւիդուալիզմը հակադրւում է սօցիալիզմին, նկատելով, որ դրանք հակամարտ, իրար ջնջող հասկացողութիւններ են:

Բայց այդ միմիայն թիւրիմացութեան, սխալ ըմբռնողութեան արդիւնք պէտք է համարել:

Իսկապէս, ինչպէս պէտք է հասկանալ սօցիալիզմը և ինչպէս՝ ինդիւիդուալիզմը: Այստեղ, ի հարկէ, սօցիալիզմը վերցնում ենք այն չափով, ինչ չա-

փով վերաբերում է մեզ զբաղեցնող հարցին:

Սմենից առաջ, սօցիալիզմը, սօցիալիստական հասարակարգն իր հետ չի բերում մարդու *slaves* ստատուսը ազատագրումը միայն: Եթե սօցիալիստական կուսակցութիւնները, սօցիալիստ մտածողներն առանձնապէս շեշտել են և այժմ էլ շեշտում են անտեսական կողմի վրայ, որովհետև առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել մարդու ֆիզիքական գոյութիւնը: Սօցիալիզմը գալիս է մարդուն ազատագրելու նաև իրաւապէս և բարոյապէս: Սօցիալիզմը մի գերազանցապէս կոլեկտիւստական տրոժէ է: Սօցիալիզմն է վերջնականապէս և լուսագոյն ձևով ապահովելու մարդ-անհատի ազատութիւնը, նրա մարդկային բարձր արժանիքը: Կարծել՝ թէ սօցիալիզմը ուզում է կամ կոչւած է ճնշելու, ոչնչացնելու մարդու անհատականութիւնը և կամ մտածել թէ՛ ազատագրելով մարդ-անհատը դասակարգային ճնշումից, սօցիալիզմը նպատակ ունի ենթարկել նրան մի այլ ոյժի գերիշխանութեան, օրինակ, կոլեկտիւին—այդ նշանակում է խորապէս սխալել և միանգամայն թիւր ըմբռնում ունենալ սօցիալիզմի մասին:

Մենք այդպէս չենք հասկանում, և չպէտք է այդպէս հասկանալ:—Սօցիալիստական կարգերի մէջ մարդ-անհատը չի կորցնելու իր ուրոյն կեանքը, իր անհատականութիւնը: Ինքը կոլեկտիւը ապահովելու է անհատի, իր անդամի ազատութիւնը, նրա ազատ և անկաշկանդ, բազմակողմանի և ներգաշնակ զարգացումը: Անհատն ունի իր յատուկ աշխարհը, մի աշխարհ իր համար, և ոչ թէ նա ներկայանում է հասարակութեան մի անկում և աննպատակ անդամը:

Ոչ հասարակութիւնը մի օրգան է, նման կենդանական մի օրգանի, և ոչ էլ անհատը մի բջիջ: Ինքը անհատը մի նպատակ է իր համար—մի ինքնանպատակ եռփուն: Նա լոկ մի միջոց չէ երբէք իրենից դուրս եղած նպատակի՝ հասարակութեան համար:

Հէնց այսօր մենք ամեն կերպ ձգտում ենք թեթևացնել մարդու աշխատանքը և տարածել հաւասարապէս բոլորի վրայ, աշխատանքը դարձնել կոլեկտիւ: Այդ ցոյց է տալիս, որ մենք աշխատում ենք անհատի ազատագրման ճանապարհի վրայ: Դրանով մենք աւելի մեծ չափի հնարաւորութիւն և ցանկալի պայմաններ ենք ստեղծում, որոնց շրջանում անհատը կարող է ազատ և բազմակողմանի զարգանալ:

Այսօր ամեն տեղ բարձրաձայն հնչեցնում և պաշտպանում են ազգերի աւտոնոմիայի պահանջը: Այս լոգունը որքան արդար է, նորքան և դեմոկրատական: Սա միաժամանակ սօցիալիզմի պահանջն է: Այսպէս ենք մենք խորապէս համոզւած, և այլ կերպ չենք կարող երևակայել սօցիալիզմը: Ամեն մի ազգ, որպէս մի ուրոյն միաւոր, պէտք է լինի կատարելապէս ինքօրէն և ինքնավար. նա պէտք է, և իրաւունք ունի, ազատ զարգանալ, ազատ ապրել և ազատ խորհել: Այդպէս լինելով հանդերձ, նա չի դադարում ամենասերտ, ներքին յարաբերութեան մէջ մնալ համայն մարդկութեան հետ: Ազգութիւնը ունի և վարում է անհատական-ազգային և միաժամանակ համամարդկային-միջազգային կեանք: Դրանք չեն հակասում իրար, այլ լրանում են մի ներդաշնակ ամբողջութեան մէջ:

* *

Ճիշտ այդպէս էլ պէտք է նայել անհատի և հասարակութեան կամ կոլլեկտիւի յարաբերութեան վրայ: Այլ տեսակի ըմբռնում սխալ է միանգամայն: Անհատները և հասարակութիւնը գտնւում են մշտական փոխազդեցութեան մէջ: Եւ այդ փոխազդեցութիւնը բազմապէսակ է—հոգեբանական, հասարակական և բարոյական:

Յետոյ, անհատի և հասարակութեան փոխազդեցութիւնը նոյնքան հին է, որքան ինքը մարդկութիւնը: Այդ փոխազդեցութիւնը գոյութիւն է ունեցել թէ նախնական պարզ հասարակութեան մէջ՝ ընտանիքում, համայնքում և ցեղի մէջ, ինչպէս և ներկայ բարդ կապիտալիստական հասարակութեան մէջ: Սխալ է միանգամայն և անհնարին բաժանել այդ երկուսը իրարից—անհատները և հասարակութիւնը: Դրանք փոխադարձաբար միմիանց գոյութիւնը պայմանաւորում են: Մէկը առանց միւսի անիմաստ, սնամէջ է, և անհնարին բան:

Օրգանական թէօրիայի հիմնադիրների և ներկայացուցիչների մեծ սխալանքը կայանում էր հէնց նրանում, որ հասարակական օրգանիզմը համեմատում էին կենդանական օրգանիզմի հետ և հետևապէս մարդկային անհատները դիտում էին որպէս սոսկական բջիջներ: Այստեղ մոռացւում էր այն կարեւոր հանգամանքը, որ մարդկային անհատների ու սոցիալական օրգանիզմի յարաբերութիւնը՝ մի կողմից և բջիջների ու կենդանական օրգանիզմի յարաբերութիւնը՝ միւս կողմից, բոլորովին տարբեր բնույթ ունեն:

— Կենդանական բջիջները չունեն գիտակցութիւն. նրանք առանձին նպատակ չունեն օրգանիզմից դուրս: Մինչ դեռ սոցիալական օրգանիզմի, այսինքն հասարակութեան անդամները, մարդկային անհատները գիտակցութիւն ունեն, մի մի գիտակցական կենտրոն են և, հետևապէս, կազմում են, առանձին օրգանական միաւորներ, ամբողջութիւններ: Աւելին կարելի է ասել, այն, որ հասարակութիւնը կեանք է ստանում միայն անհատների գիտակցութեան մէջ: Հասարակութիւնը առանց անհատների անհատականալի է, քանի որ նա կազմած է անհատներից, իսկ, միւս կողմից, անհատն էլ իր հասարակական բարձր արժէքը ստանում է միմիայն սոցիալական կեանքում, հասարակութեան մէջ: Եւ փաստապէս մարդկային բովանդակ առաջադիմութիւնը պայմանաւորւում է այդ ձեւով, անհատների և հասարակութեան փոխազդեցութեամբ:

* *

Եւ հետևողականօրէն մենք լոքում ենք որպէս գերագոյն իդէալ ինքնօրէն, բազմակողմանի և ներդաշնակ անհատը հասարակութեան մէջ: Անհատի ինքնորոշումն է այս: Անհատն աւտոնոմ է, ազատ իր խղճի առաջ, ազատ ընտրելու, աւտոնոմ՝ իր տաղանդի և համոզումների համաձայն: Ամբողջ մարդկութիւնը թերևս կարելի է պատկերացնել որպէս մի հսկայական դաշնակցութիւն ոչ միայն ինքնավար ազգութիւնների, այլ և ինքնավար համայնքների և, վերջին հաշւով, ինքնավար անհատների: Հէնց այստեղ է մեզ առաջնորդում է սոցիալիզմը: Եւ այսպիսի պայմանների

մէջ միայն անհատի կեանքը դառնում է իսկապէս ազատ և *ստեղծագործական* ըստ ամենայնի: Իսկ նման պայմաններ կարող ենք սպասել միմիայն սօցիալիստական հասարակարգի մէջ:

Եւ ինչ. մեր վերլուծումը և խորհրդածութիւնը մեզ բերեց ուղիղ-ինդիւիդուալիզմի աշխարհը: Ինդիւիդուալիզմը այլ բան չի ասում, քան այս:

Անշուշտ, կան ինդիւիդուալիզմի տարբեր ըմբռնումներ:—

Մեր հայեցողութեամբ ինդիւիդուալիզմը գերազանցապէս մի բարոյական արժէք է: Նա էգօիզմ չէ: Նա չի պաշտպանում անհատի եսական շահերը և անհատին հակադրում հասարակութեան: Ինդիւիդուալիզմը մի ձգտում է, որ նպատակ ունի լաւագոյն ձևով պահպանել մարդու անհատականութիւնը, նրա իւրայատուկ ձևը: Հասարակական տարրի նշանակութիւնը չի կարելի ժխտել մարդու անձնաւորութեան զարգացման մէջ: Այս ամենը կասկածից դուրս է: Բայց, միևս կողմից, մարդու անհատականութեան ազատութիւնը, նրա բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը կազմում է, և պէ՛տք է կազմէ, հասարակութեան վախճանական նպատակը:

Այսպէս, վերջին հաշուով, ինդիւիդուալիզմը նոյն բովանդակութիւնը, նոյն ձգտումն ունի ինչ սօցիալիզմը: Եւ յիշուի, սօցիալիզմը ինդիւիդուալիստական է: Թող այս միտքը առաջին հայեացքից արտառոց չթւայ: Շէֆլէն նկատում է, որ սօցիալիզմը այլ բան չէ, եթէ «մինչև ծայր աստիճանի հասցրած ինդիւիդուալիզմ»: Եւ նա մենակ չէ: Որքան էլ Շէֆլէի յայտարարութիւնը համարւի չափազանցութիւն, յամենայն դէպս

մեզ համար անկասկած է սօցիալիզմի ինդիւիդուալիստական գիծը, սօցիալիզմի և ինդիւիդուալիզմի ներքին կապը: Այս երկուսը իրար չեն ժխտում, այլ լրացնում են: Սրանք հակադիր հասկացողութիւններ չեն, և երբէք այդպէս չպէտք է նայել նրանց վրայ: Նրանք ամբողջանում են մի սիմբէզի մէջ, Այստեղ ևս երևան է զալիս մեր աշխարհայեցողութեան սինթետիկ կողմը:

VII

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՍՕՑԻԱԼԻԶՄԸ

Շատ գաղափարներ, նամանաւանդ մեր մէջ, յաճախ ենթարկւել են և ենթարկուում են ամենաբիրտ խեղաթիւրման: Եւ նրանք, թէև ներդաշնակ են իրենց անաղարտ կերպարանքով, բայց դառնում են հակադիր և հակասական իրենց խեղաթիւրման մէջ: Երկար ժամանակ և լուրջ աշխատանք է պահանջում, որ պէսզի այդ գաղափարները երևան գան իրենց իսկական պատկերով և բովանդակութեամբ:

Այդպիսի ճակատագրի են ենթարկւել նոյնպէս ազգային հարցը և սօցիալիզմը: Թէև ներդաշնակ, բայց շատերը այդ երկու գաղափարները համարել են և այժմ էլ համարում են անհաշտելի, հակասական: Եւ, դժբախտաբար, այդ ոգով դաստիարակւել են ամբողջ սերունդներ: Այդպիսի թիւը տեսակէտների տարածման գործում մեծ դեր է կատարել յատկապէս սօցիալ-դեմօկրատիան, նամանաւանդ ռուսական սօցիալ-դեմօկրատիան:

Բայց ճիշտ են արդեօք նրանց պնդումները, ճիշտ է արդեօք, թէ այդ երկու գաղափարները հակասական են և, հետևապէս, սօցիալիստները ու սօցի-

ցիալիստական կուսակցութիւնները որեւէ գործ չունին ազգային հարցի հետ:

Տեսնենք ինչ են ասում իրականութիւնը և ամբողջ դատողութիւնը, տեսնենք ինչ է ռուսացանում պատմութիւնը, պատմական զարգացումը: Մօտենանք հարցին բաց, ընդհատի աչքով, առանց յեւելու զանազան հեղինակութիւնների վրայ, առանց բազմաթիւ մէջբերումների:

Ի՞նչ է ազգութիւնը:

Այս հարցը դնելով, մեր նպատակը չէ բնաւ զանազան տեսութիւններ զարգացնել ազգութեան մասին: Մենք կամենում ենք միայն ընդգծել այն, ինչ անտարակուսելի է և մեզ հետաքրքրող հարցի տեսակէտից կարևոր:

Նախ և առաջ ամեն կասկածից դուրս է ազգերի գոյութեան փաստը:

Ազգութիւնը ներկայացնում է ցեղերի և ժողովուրդների յարաճուն զարգացման պատմութեան մէջ և ընթացքում մարդկային հասարակութեան այն ձևը, որ մշտական է, որ յարատեւել է մինչև այսօր և յարատեւելու է ընդմիշտ:

Ճիշտ է, դարերի, հարիւրաւոր դարերի ընթացքում ազգերը փոխւել են անընդհատ. շատերը հեռացել, անհետացել են պատմութեան բեմից՝ իրենց դերը կատարելով և որոշ հետք թողնելով պատմութեան մէջ, բայց նրանց տեղը բռնել են նորերը՝ նոր, կենսունակ և ուժեղ ազգեր:

Այս յարաճուն զարգացման և շարունակական փոփոխման պրօցեսի մէջ, այս մշտական ելեւէջի ոլորտում ազգութիւնը, որպէս մարդկային հասարակութեան մի ձև, մնացել է անփոփոխ, յարատեւ և

սա պատմական իրողութիւն է, մեզ համար ամենակարեւորը:

Եւ, յիրաւի, ամբողջ մարդկութիւնը զարգանում է այդ ձեւի, ազգային ձեւի մէջ:—Ազգ-միջավայրումն են ապրում, մեծանում, դրսևորում իրենց հոգին, ազգային հոգին, ստեղծագործում իրենց կուլտուրական արժէքները բոլոր մեծ ու փոքր ժողովուրդները, բոլոր դասակարգերը, համայնքները և, վերջապէս, անհատները: Իրականութեան և պատմութեան խօսքն է այս: Այնպէս որ ամեն մի կուլտուրա անպայման ազգային է: Այլ կերպ էլ լինել չի կարող, քանի որ ամեն մի կուլտուրայի հիմքը կազմում են ազգային առանձնատկութիւնները, ազգային ոգին, ազգային միջավայրը և այլն:

Ճիշտ է, ազգերը և ժողովուրդները մշտապէս գտնւում են փոխազդեցութեան մէջ, ճիշտ է, նրանք միմիանցից մշտապէս փոխառութիւններ են անում, բայց, անկասկած է, որ իւրաքանչիւր կուլտուրա, որքան էլ նա զարգանում է օտար կուլտուրաների ազդեցութեան տակ, դարձեալ կրում է ազգային դրոշմը: Այդ իսկ պատճառով էլ ամեն մի ստեղծագործութիւն, քաղաքակրթութեան ամեն մի արտայայտութիւն ամենից առաջ և առաւելապէս ազգային է: Ո՞վ կարող է բացասել այս:

* *

Շատերը խօսում են կոսմոպոլիտիզմի անունից և իրենց յայտարարում աշխարհաքաղաքացի, կարծելով՝ թէ նրանց խոհերը, ստեղծագործութիւնը, ապրելակերպը ոչինչ ազգային չունին: Բայց, մեզ թւում է, որ այդ բոլորը պատրանք է միայն, մի ինքնախա-

բէութիւն, և ուրիշ ոչինչ: Մեզ թւում է, որ կոսմոպոլիտիզմը մի թիւր ըմբռնում է, մի անհնարին բան: Ամեն կասկածից դուրս է, որ իւրաքանչիւր անհատ, ով էլ նա լինի, բանւոր թէ բուրժուայ, ռաշպար թէ կալաժատէր, գիտուն թէ ագէտ, այդ միևնոյնն է, պատկանում է մի ազգութեան, ներկայանում է մի ազգի անդամ: Ինչ էլ ուզենայ նա անի, ինչպիսի հասարակական քաղաքական դաւանանք էլ նա ունենայ, այդ դրութիւնը ոչնչով չի փոխւի:

↓ Շատ յաճախ կոսմոպոլիտիզմ և ինտերնացիօնալիզմ գաղափարները շփոթում են իրար հետ: Բայց այդ մի կոպիտ սխալ է: Մեր իզէպլը ինտերնացիօնալն է, բայց երբէք կոսմոպոլիտիզմը: Մենք պատկանելով մի ազգութեան, այդ ազգութեան հետ միասին պատկանում ենք ազգերի ընդհանուր ընտանիքին — ինտերնացիօնալին: ↓

Այն հայեացքը, թէ ազգերը միմեկի տք է վերանան պատմութեան ընթացքում և պիտի ստեղծւի մի միապաղաղ մարդկութիւն, մարդկային մի ցեղ կամ, չգիտեմ, ինչոր նման մի բան, բարեբախտաբար չի ճշտւում: Այս պնդումի գէմ բողոքում է ինքը՝ պատմութիւնը, որ մեզ համար իմաստութեան աղբիւր է: Այսօրւայ համաժողովրդական պատերազմը մի աւելորդ անդամ ևս ցոյց տւեց այդ մտայնութեան անհիմն, արտառոց լինելը: Ազգերը, անգամ ամենափոքր ազգերը ոչ մի տրամադրութիւն ցոյց չեն տալիս չքանալու, հեռանալու պատմութեան բեմից՝ կամովին կամ ոյժով: Անգամ աւելին: Հետզհետէ նոր ու նոր անկախ ազգեր են երևան գալիս և ձգտում են հաստատուն տեղ գրաւել ու իրենց յատուկ արժէքները ստեղծագործել:

Ահա այս հիմնական և անժխտելի իրողութիւնները դեկավար տեսակէտ ունենալով, այժմ դառնանք այն հարցին թէ ինչ է սօցիալիզմը և ինչ է նա պահանջում:

Ամենից առաջ սօցիալիզմը չէ գալիս ոչնչացնելու ազգութիւնները:

Այսպէս մտածել, նշանակում է լինել խորին թիւրիմացութեան մէջ: Սօցիալիզմը, ընդհակառակը, ազգերի գոյութեան փաստն ընդունելով որպէս անտարակուսելի, գալիս է հաստատելու ազգերի յատուկ իրաւունքը և տեղը այս աշխարհում, նա կոչւած է ապահովելու ամեն մի ազգի և ժողովրդի ինքնուրոյն և ազատ զարգացման հնարաւորութիւնը: Սօցիալիզմը բնորոշւում է որպէս մարդկութեան բարձրագոյն զարգացման մի ձգտում, որ տանում է դէպի տընտեսապէս, իրաւապէս, բարոյապէս և բաղադրականապէս ազատ և բնօրէն ազգութիւնները և այդ ինքնօրէն ազգերի միջավայրում՝ դէպի ազատ և ինքնօրէն անհատները: Սօցիալիզմի նպատակն է անհատի, աշխատաւոր մարդու կատարեալ ազատագրումը ամեն տեսակի ճնշումներից: Սօցիալիզմն է լաւապէս ապահովելու անհատի ինքնորոշումը, խղձի և հոգեկան ինքնորոշումը: Բայց, միւս կողմից, ինչպէս նկատեցինք, անհատները միայն ազգային ձևերի մէջ, ազգ-միջավայրումն են ապրում, զարգանում, խորհում, գործում և ստեղծագործում: Իսկ սրա բանական և տրամաբանական հետեւութիւնն է, թէ սօցիալիզմը ձգտում է ստեղծել անկախ, ինքնօրէն ազգութիւններ և ապահովել նրանց տեղը և իրաւունքը:

Սօցիալիզմն ոչ միայն չունի ազգերը ոչնչացնելու տենդենցը, այլ ընդհակառակը, նրա բարձր

կոչումն է ներկայ պետութիւնների տեղ ստեղծել ազգերի, անկախ և ինքնօրէն ազգերի ներկայացուցչութիւնը:

* * *

Մեր այս վերլուծումից անմիջապէս և տրամաբանօրէն հետեւում է նախ այն, որ սօցիալիզմը և ազգային գաղափարը ոչ միայն իրար չեն հակասում, այլ, ընդհակառակը, միմիանց լրացնում, ամբողջացնում են: Եւ երկրորդ, որ ամեն մի սօցիալիստական կուսակցութեան համար ազգային հարցը առաջնակարգ և վերին աստիճանի կենսական խնդրի արժէք ունի: Այդպէս էլ է: Յատկապէս սօցիալ-դէմօկրատիան չունի ազգային առանձին ծրագիր, որ բղխում է մարքսիզմի ընդհանուր փիլիսոփայական հասարակագիտական աշխարհայեցողութիւնից: Բայց այսօր այդ հոսանքն էլ կարևոր էվօլյուցիայի է ենթարկւել և ազգային հարցի վրայ յատուկ ուշադրութիւն է դարձնում և տեղ տալիս իր ծրագրի մէջ:

Սօցիալիստական կուսակցութիւնները գերազանցապէս շահագրգռւած են, և պէտք է շահագրգռւեն, ամենից առաջ վերացնելու բոլոր տեսակի ազգային ճնշումները, ոչնչացնելու մեծ և ուժեղ ազգերի գերիշխանութիւնը փոքր և թոյլ ազգերի վրայ: Եւ այդ մի քանի նկատումներով:—Նկատւած փաստ է, որ այնտեղ, ուր տիրում է ազգային գերիշխանութիւն, մեծապէս բարդանում և դժարանում է աշխատաւորութեան դասակարգային կռիւը: Նման պայմանների մէջ, ազգային ճնշման միջոցին, շատ դիւրութեամբ բանւորը և բուրժուան, թէև հակառակ, թշնամի դասակարգերի ներկայացուցիչներ և

դասակարգային շահերի տէր, միանում են ազգային ինքնապաշտպանութեան, ազգային իրաւունքների և անկախութեան պաշտպանութեան շուրջը՝ ընդդէմ գերիշխող, ճնշող ազգի բուրժուազիայի և բանւորութեան: Անհերքելի է այս և ճշտած պատմութեան մէջ: Այսօրւայ պատերազմը շատ խրախտական փաստեր տւեց այդ տեսակէտից:

Սօցիալիստական կարգի, սօցիալիստական կուսակցութիւնների յաղթանակի գրաւականը կայանում է բոլոր ազգութիւնների յեղափոխական դեմօկրատիայի, աշխատաւոր մասսաների կուռ, համերաշխ միացման մէջ: Առանց դրան չկայ ապահով յաղթանակ: Իսկ դրա համար առաջնակարգ կարեւորութիւն, հրամայական անհրաժեշտութիւն է ներկայացնում ազգային հարցի արդար ու արմատական լուծումը, ազգերի իրական իրաւահաւասարութիւնը, անկախութիւնը: Ինքը՝ Կառլեկին, մարքսիզմի նշանաւոր թէօրեաիկը՝ նկատում է, թէ բանւորի նորմալ զարգացման համար ազգային անկախութիւնը նոյնքան անհրաժեշտ է, որքան ընդհանուր ընտրողական իրաւունքը, խօսքի և մամուլի ազատութիւնը:

* *

Ինչպէս և որ պետական ձևն է լաւապէս ապահովում ազգերի իրաւահաւասարութիւնը և անկախութիւնը: Սօցիալիստական կուսակցութիւնները տարբեր ձևեր են առաջարկում: Հ. Յեղ. Դաշնակցութիւնը և մի շարք այլ սօցիալիստական կուսակցութիւններ ընդունում են դաշնակցական հանրապետութեան ձևը, մանաւանդ Ռուսաստանի նման բազմաեղ և բազմալեզու երկրի համար: Ամենից առաջ

դաշնակցական դեմօկրատական հանրապետութեան մէջ չեն լինի գերիշխող և ստորադաս, իրաւագուրկ ազգեր: Դաշնակցական հանրապետութեան ձևի մէջ պիտի ապահովւի ամեն մի ազգի ինքնօրէնութիւնը, իսկ թէ ինչպէս և ինչ միջոցներով, այդ արդէն մանրամասներ են, որոնց վրայ այստեղ չենք կարող, և ոչ էլ մեր նպատակն է, կանգ առնել: Յիշենք միայն, որ կան ինքնօրէնութեան տարբեր ձևեր—երկրային, ապերկրային, ազգային-կուլտուրական, էականն այն է, որ իւրաքանչիւր ժողովուրդ հանդիսանալու է իր ազգային բովանդակ կեանքի բացարձակ տէրը և տնօրինողը: Ամեն մի ազգ ունենալու է իր ազգային Սահմանադիր ժողովը, որ մշակելու է ազգային պետութեան սահմանադրութիւնը, հիմնական օրէնքները, ինչպէս և ազգային սէյմը, պարլամենտը: Այսպէս ստեղծւելու են անթիւ սէյմեր—ազգային սէյմեր:

Ահա այս ուղղութեամբ պէտք է գործեն սօցիալիստական կուսակցութիւնները, բոլոր ժողովուրդների արմատական դեմօկրատիան: Այս ուղին է միայն տանում դէպի ժողովուրդների և ազգերի իսկական եղբայրութիւնը, իրական իրաւահաւասարութիւնը:

VIII

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌԻԻ

Ասել ենք, որ դասակարգային կռիւը ամենահատու միջոցներից մէկն է մեր նպատակին հասնելու համար:—

Մարդկային հասարակութիւնը երբէք չի եղել միատարր, միապաղաղ մի զանգւած: Հին և հնագոյն շրջաններից սկսած հասարակութիւնները ենթակայ են եղել մեծ կամ փոքր չափի շերտաւորման, բաժանւած տարրեր, շահերով հակադիր՝ խաւերի, դասերի:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ ժողովուրդները միշտ էլ բաժանւած են եղել երկու մեծ դասերի—իշխողների և հպատակների, իրաւատէրերի և իրաւազուրկների, սեփականատէրերի և սեփականագուրկների, հարստահարողների և հարստահարուողների: Ահա Յունաստանը՝ դեմոս և եւպատրիդներ, ահա Հռոմը՝ պլէբէյներ և պատրիկներ:

Իշխողը և իրաւատէրը միշտ էլ եղել է հասարակութեան փոքրամասնութիւնը, իսկ հարստահարողները՝ ճնշող մեծամասնութիւնը: Մարդկային մտքի և աշխատանքի դարաւոր նւաճումները չեն ծառայել բնաւ հասարակութեան բոլոր անդամներին հաւասարապէս և անխտիր, այլ բացառապէս տիրող դասի մենաշնորհն են հանդիսացել: Այնպէս որ՝ բովանդակ

պատմութեան ընթացքում այդ տիրող փոքրամասնութեան երջանկութիւնը ձեռք է բերւած ժողովրդի մեծամասնութեան թշւառութեան, դժբախտութեան գնով:

Այդ շահագործող և իշխող փոքրամասնութիւնն իր ձեռքն առնելով ժողովրդի հանրային և քաղաքական կեանքի ղեկը, իր տրամադրութեան տակ ունենալով հարուստ դրամագլուխ և մարդած զօրք, ազատօրէն ստեղծել է և ստեղծում է օրէնքներ և իրաւակարգեր՝ իր կամքի և շահերի համաձայն, և այս ձևով էլ ապահովել է իր մշտական տիրապետութիւնը: Նա ոչ մի միջոցի առաջ կանգ չի առել անցեալում, և կանգ չի առնում այսօր էլ, իր այդ նպատակի համար:

Նա այդ նպատակով շահագործել է և շահագործում է ազգի, կրօնի, հայրենիքի, պետութեան բարձր գաղափարները, ամեն կերպ ձգտել է և ձգտում է տգիտութեան, անգիտակից դրութեան մէջ պահել հպատակ, շահագործող և իրաւազուրկ մասսաները: Դրանում է նա տեսնում իր փրկութիւնը:

Այդպէս է եղել թէ հին և միջնադարեան, թէ արդի բուրժուական-կապիտալիստական հասարակութեան մէջ: Ամեն տեղ և ամեն ժամանակ էութիւնը շարունակում է մնալ նոյնը, փոխւում է միայն շահագործման և տիրապետութեան ձևը: Մի տեղ, մի ժամանակ, օրինակ, հին և միջին դարերում, այդ շահագործումը աւելի բիրտ էր, իսկ այսօր աւելի մեղմ, բայց և աւելի խելացի ու մեծ չափով:

Այսպէս, պատմական սկզբնական շրջաններից ի վեր իրար դէմ առ դէմ կանգնած են եղել այս երկու հակադիր, թշնամի դասակարգերը՝ շահագործող

և շահագործող, բուրժուա և աշխատաւոր, և մշտապէս իրար դէմ կռիւ են մղել—դասակարգային կռիւ. երբեմն մեղմ և խուլ, երբեմն էլ ուժեղ և արիւնահեղ:

Դասակարգային կռիւ սկզբունքի վրայ շեշտել են շատերը, ինչպէս Շուշտեր, Բլանկի, Պեկկեր, Բաբոֆ, Ռուսաստանում՝ Հերցէն և այլն: Բայց աւելի լրիւ և վերջնական ձևակերպում տւին Մարքս և Էնգելս՝ «Կոմունիստական մանիֆեստում»:

Մարքս և Էնգելս դասակարգային կռիւը հռչակեցին որպէս պրոգրէսի մի հզօր գործօն: Անգամ աւելին: Նրանք անվերապահ լայտարարեցին, թէ ժողովուրդների պատմութիւնը այլ բան չէ, եթէ ոչ դասակարգերի կռիւ պատմութիւն: Չափազանցութիւն է այս, անշուշտ, և բնաւ չի համապատասխանում պատմական իրականութեան: Պատմութեան բովանդակութիւնը չի լցւում միայն դասակարգերի կռիւ պատմութիւնով: Պատմութիւնը չի ստեղծւում և առաջ շարժւում միայն այդ գործօնի շնորհիւ: Դասակարգային կռիւը մէկն է ժողովուրդների պատմական զարգացման ազդակներից, և հզօր ազդակներից: Բայց դրանից ոչ աւելի: Դասակարգային կռիւ չափ, անգամ աւելի, մարդկային պատմութիւնը լցնում է ցեղերի, ազգային կռիւր: Եւ այդպէս է պատմական ամենահին շրջաններից ի վեր: Իսկ այսօրեայ մասին աւելորդ ենք համարում խօսել, քանի որ երբեք ազգերի հակամարտութիւնը այնպէս ցայտուն ձևի մէջ չէր արտայայտւել, ինչպէս մեր օրերում:

Բայց հրն է այն չափանիշը, սրով որոշւում են դասակարգերը, թէ այս մէկը բուրժուա է և այն միւսը՝ աշխատաւոր, ոչ-բուրժուա: Այդ մասին կան տար-

բեր տեսութիւններ: Բայց մեզ համար ամենաճիշտ չափանիշը եկամուտի աղբիւրն է: Հասարակութեան մի մասը չի աշխատում, այլ ապրում է յաւելեալ արժէքով: Իսկ այս յաւելեալ արժէքը բանւորի և ռաշպարի աշխատանքի այն մասն է, որ չի վճարւած: Այնպէս որ հասարակութեան այդ մասը, իշխողները և սեփականատէրերը ապրում են մեծամասնութեան, աշխատաւոր ժողովրդի հաշիւն:

Այս շահագործումը կատարւում է հաւասարապէս թէ գործարանում՝ տեխնիքական աշխարհում և թէ գիւղում՝ գիւղական աշխարհում: Էական տարբերութիւն չկայ: Երկու դէպքում էլ, գիւղական թէ տեխնիքական աշխարհում, շահագործւում է աշխատաւորը, որ ստանում և ապրում է իր հալալ աշխատանքի մի չնչին մասով միայն:

Նկատենք, որ մենք էական ոչ մի տարբերութիւն չենք տեսնում գիւղի և գործարանի աշխատաւորի, աշխատաւոր գիւղացու և բանւորի միջև: Մեր խորին համոզմունքով կոպիտ է և անճիշտ մարքսիստական բաժանումը: Ըստ մարքսիզմի ամբողջ մարդկութիւնը բաժանւում է բուրժուազիայի և պրօլետարիատի: Գիւղացիութեան համարել անվերապահօրէն բուրժուական, նշանակւում է կատարել մի կոպիտ սխալ: Միանգամայն անարդար և անհնարին բան է բուրժուա, հետևապէս շահագործող համարել այն գիւղացուն, որ ապրում է իր աշխատանքով, իր ճակատի քրտինքի արդիւնքով և ոչ ոքի չի շահագործում, ոչ մէկի աշխատանքի վաստակը չի յափշտակւում: Եւ եթէ գիւղի աշխատաւորութեան մէջ նկատելի է որոշ շերտաւորում, որոշ հակառակութիւն, նոյնը նկատելի է նաև գործարանի աշխատաւորու-

թեան, բանւորութեան շարքերում: Այդ տարբերութիւնը, այդ հակամարտութիւնը այնքան աննշան է, որ էական նշանակութիւն չի կարող ունենալ բնաւ:

Այսպէս, մի կողմը կանգնած է կապիտալիստական-բուրժուական դասակարգը և միւս կողմը աշխատաւորական դասակարգը՝ արդիւնազորական բանւորութիւնը և աշխատաւոր գիւղացիութիւնը:

Այս երկու դասակարգերը երթալով աւելի անհաշա, աւելի կատաղի թշնամիների բանակի կերպարանք են ընդունում: Թէ մէկը և թէ միւսը այսօր, — յաղթանակելու համար, — կազմակերպւում են միջազգայնօրէն, և նրանց կոխը ընդունել է միջազգային բնաւորութիւն:

Նոր չէ այս կռիւը, ինչպէս ասել ենք: Դարերի ընթացքում շարունակւում է այդ դասակարգային կռիւը:

Բայց այդ շարունակական և յամառ կռիւից յաղթանակող է դուրս գալու աշխատաւորութիւնը, յեղափոխական և միջազգային դեմօկրատիան: Այսօր արդէն վճռական յաղթանակներ է տանում աշխատաւորութիւնն ամեն տեղ: Կապիտալիզմը, կապիտալիստական հասարակարգը վերջի-վերջոյ ոչնչանալու է, կապիտալիզմը սնանկ է յայտարարւելու: Այս է Հ. Յ. Դաշնակցութեան համոզումը: Այս է ասում և վկայում նաև պատմական ընթացքը: Այս են թելադրում նոյնպէս պատմական զարգացման սուբեկտիւ ոյժերը:

Արդարութիւնը աշխատաւորութեան կողմն է: Արդիւնազորական բանւորութիւնը և աշխատաւոր գիւղացիութիւնը պայքարում են իրենց կատարեալ ազատագրման համար: Բայց այդ միայն իրենց ազատագրումը չէ, այլ ամբողջ մարդկութեան ազատա-

գրումը: Ինչո՞ւ: Նախ և առաջ գիւղացիութիւնը և բանւորութիւնը կազմում են ժողովրդի ճնշող մեծամասնութիւնը, գրեթէ 90—95 տոկոսը: Եւ երկրորդ, որ ամենագլխաւորն է, աշխատաւորութիւնը բնաւ նպատակ չունի միւսներին ճնշելու: Այս չէ նրա պատմական և հասարակական միտքն: Նա ուզում է, որ ամենուրեք թագաւորէ իրաւահաւասարութիւն և աշխատանքի բարձր և սրբազան սկզբունքը, որ ամեն մէկը աշխատէ և իր սեփական աշխատանքով ապրէ: Աշխատաւորութեան նպատակն է ոչնչացնել մասնաւոր սեփականութիւնը, որ հասարակական չարիքի գլխաւոր արմատն է և ընդհանրութեան, համայնական սեփականութիւն դարձնել հողը, հանքերը, գործարանները, հաղորդակցութեան և փոխանակութեան միջոցները, և այսպիսով երկրի բովանդակ տնտեսութիւնը վարել հաւաքական, կօլլեկտիւ կերպով:

Եւ այդ պահուն կապիտալիստական հասարակական շէնքի փլատակների վրայ բարձրանալու է սօցիալիստական հասարակարգը: Հէնց այդտեղ էլ վերջանում է դասակարգային կռիւը, գոնէ այն բնով ի դասակարգային կռիւը, որ այժմ մղւում է: Չմոռանանք, որ դասակարգային կռիւը նպատակ չէ, այլ մի միջոց է միայն՝ որոշ իդէալ իրականացնելու համար:

Բայց մինչև սօցիալիզմը, սօցիալիստական հասարակարգը, դեմօկրատիան, աշխատաւորութիւնը ձգտում է կեանքի մէջ իրագործել համայնական սեփականութեան և տնտեսութեան մի քանի ձևեր, յատկապէս գործակցութիւնների, արդիւնաբերող և սպառող ընկերակցութիւնների միջոցով: Հ. Յ. Դաշնակցութիւնը յանձնարարում է ամեն տեղ ոյժ տալ

համայնական սկզբունքներին: Այդ ընկերակցութիւնները ոչ միայն որոշ չափով ապահովելու են աշխատաւորութեան առօրեայ շահերը, այլ և, համայնական ոգով դաւաժանեալով ժողովրդական մասսաները, պատրաստելու են նրանց սօցիալիստական հասարակական և իրաւական կազմակերպութեան համար, ուրիշ խօսքով, հարթելու են դէպի սօցիալիզմը տանող ճանապարհը:

IX

ՕՐԻՆԿՏԻԻ ԵՒ ՍՈՒՐԻՆԿՏԻԻ ՈՅԺԵՐ

Տնտեսապէս, իրաւապէս և բարոյապէս ազատ ու ինքնօրէն մարդկութիւն կամ սօցիալիզմ—այսպէս ձևակերպեցինք մեր վախճանական իդէալը:

Մեր այս հասարակական իդէալը, ինչպէս տեսանք մինչև այժմ, մի անխարիսխ ցնորք, մի գեղեցիկ ցանկութիւն չէ միայն: Նա «մի հնարաւորութիւն է, իրագործելի հնարաւորութիւն», պատմութեան մէջ մատնանշւած: Մեր հասարակական իդէալը բղխում է, մի կողմից, իրերի առարկայական, տարերային ընթացքից և, միւս կողմից, պատմութիւնը առաջ շարժող ոյժերի, զանգւածների և անհատների կամքից, խղճից և բանականութիւնից: Այսպէս, մեր իդէալի օգտին են խօսում պատմութեան երկշարք գործօնները՝ օբիեկտիւ և սուբիեկտիւ:

«Պատմութեան օբիեկտիւ և սուբիեկտիւ ստեղծագործող ոյժերի դաշնադրութեան մէջ է մեր յաղթանակի զրաւականը»: Ահա ինչ է առւած Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի մէջ:

Այս խօսքերի մէջ մի ամբողջ հասարակագիտական վարդապետութիւն կայ:—Մենք չենք կանգնած

այն տեսակէտի վրայ, թէ պատմութեան միակ շար-
ժիչ ոյժը առարկայական գործօններն են: Մենք հա-
մաձայն չենք, թէ ամեն մի հասարակական կամ քա-
ղաքական յեղաշրջում, պատմական երևոյթ առաջա-
նում և զարգանում է *սարերայնօրէն*, միմիայն իրե-
րի տարերային ոյժերի շնորհիւ: Սա կը լինէր հիմ-
նական հակասումն այն ընդհանուր և ղեկավար տե-
սակէտի, որ զարգացրել ենք մեր այս փոքրիկ հասա-
րակագիտական էտիլոններում: Մենք չենք ընդունում,
թէ մարդկային զարգացումը արտադրական ոյժերի
իմմանենտ զարգացումն է, ինչպէս թելադրում է
Մարքսի հասարակագիտական տեսութիւնը: Մարքսի
վերոյիշեալ թեզիսի համաձայն, տեղի է ունենալու
անպայմանօրէն, բնական անհրաժեշտութեամբ կա-
պիտալի կենտրոնացում, կուտակում. խոշոր կապի-
տալիստական արտադրութիւնը առաջ է բերելու վար-
ձու բանւորութիւն, բնականօրէն վերանալու են մանր
արդիւնաբերութիւնները և վրա անխուսափելի հետե-
ւանքը լինելու է պրոլետարիատի հսկայական աճումը,
ուրիշ խօսքով, կատարելու է ժողովրդի լայն խաւե-
րի, գիւղացիութեան և այլն, անդարձ և կատարեալ
պրոլետարացումը: Այսպիսով, իրերի բնական ընթաց-
քը ստեղծում է պրոլետարիատի գերիշխանութիւնը,
գիկտատուրան և, հետևապէս, մեր ցանկալի երջան-
կութիւնը:

Բայց այս տեսական կառուցածքին ժամանակը
և կեանքը խիստ հարւածներ տւին: Զարգացման ըն-
թացքը ցոյց աւեց, որ տեղի չի ունենում սպասած
կապիտալի և հողի կենտրոնացումը, մանր արդիւնա-
բերութիւնները յամառ կերպով շարունակում են պահ-
պանել իրենց գոյութիւնը, ինչպէս և չի կատարւում

պրոլետարացումը այն չափով, ինչպէս ենթադրում
էին տեսականապէս:

Ընդունել, թէ քաղաքական կամ հասարակական
յեղաշրջումները ներկայանում են այնպիսի բնական,
տարերային պրոթիւմներ, ինչպիսին են երկրաբանա-
կան պրոթիւմները, դա նշանակում է կատարել
մի կոպիտ հասարակագիտական սխալ:

Հասարակական և քաղաքական շարժումների,
պատմական երևոյթների մէջ որոշիչ դեր են խաղում
նաև սուբիեկտիւ ոյժերը, սուբիեկտիւ գործօնները,
անհատների և հասարակական խմբակցութիւնների
գիտակցական և ակտիւ գործունէութիւնը: Սօցիա-
լական կեանքի խելացի և արդար վերակազմութեան
գործը հնարաւոր է,—և կատարւելու է, բոլոր աշխա-
տաւորների գիտակցական ստեղծագործութեամբ և
ակտիւ մասնակցութեամբ:

Ահա Հ. Յ. Դաշնակցութեան աշխարհայեցողու-
թեան մի բնորոշ կողմը:

Մարդ-անհատը իր էութեամբ մի զգացող, տեն-
չացող և որոշ նպատակներ ունեցող էութիւն է: Նա
չի բաւականանում միայն նրանով, ինչ կայ, ինչ
ուեալ է, ինչ անհրաժեշտօրէն լինելու է: Նա ուզում
է ստեղծել այն, ինչ ցանկալի է, ինչ պիտի լինի:
Սօցիալական հրամայականն է այս: Մարդ իր իղէա-
լի, բարոյական և արդարութեան տեսակէտով քննա-
դատում, վերազնադատում է այդ, նոր արժէքներ
ստեղծում և դրանց յաղթանակի համար պայքար
մղում: Եւ մարդիկ այս ձևով իրերի բնական ընթաց-
քի մէջ իրենց յատուկ մասնակցութիւնն են ունե-
նում, ոչալ յարաբերութիւններին ուղղութիւն տա-
լիս, ազդում երևոյթների շարժման վրայ:

Այստեղից արդէն պարզուում է որոշ չափով նաև պատմութեան այդ երկշարք գործօնների, օրիեկտիւ և սուբիեկտիւ ոյժերի փոխ-յարաբերութեան հարցը: Բայց միայն որոշ չափով: Մի փոքր կանգ առնենք այս փոխ-յարաբերութեան վրայ:—

Հէնց սկզբից պիտի նկատենք, որ օրիեկտիւ և սուբիեկտիւ ազդակների փոխազդեցութեան և դերի որոշումը մի բարդ և դժւարին խնդիր է: Այս երկշարք գործօնները պատմութեան, քաղաքական և հասարակական երևոյթների մէջ այնպէս շաղկապւած են, որ այնքան էլ դիւրին չէ ճշտապէս որոշել իւրաքանչիւրի դերը և մասնակցութեան չափը:

Բայց յամենայն դէպս պատմութեան այդ երկու կողմերը չեն հակասում իրար, այլ լրացնում են և կազմում մի ներդաշնակ ամբողջութիւն: Օրիեկտիւ գործօնները կամ ոյժերը այս կամ այն չափով որոշում են պատմական, հասարակական և քաղաքական շարժման կարգը, իսկ սուբիեկտիւ գործօնները ազդում են այդ շարժման ընթացքի վրայ: Թէև պատմականօրէն երևոյթները որոշւում են, հասարակական միջավայրը հասունանում է, բայց որոշ իդէալ ունեցող անհատները և խմբակցութիւնները իրենց կնիքն են դնում շարժման ընթացքի վրայ, վճռական մասնակցութիւն ունենում այդ երևոյթների վախճանական ձևաւորման մէջ: Եւ հէնց դրանում է կայանում ակտիւ մասնակցութիւնը և այդպէս պիտի հասկանալ այն միտքը, երբ ասում են՝ պատմութիւնը ստեղծել:

Ո՞վ կարող է ժխտել այն հսկայական և վճռա-

կան դերը, որ կատարեց բուրժուազիան, երրորդ դասակարգը, Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ստեղծման և ձևաւորման մէջ: Այդ մեծ հասարակական պորթկումը, անկասկած, պատմականօրէն պատրաստւած էր, միջավայրը հասունացած, բայց բուրժուազիան տւեց յեղաշրջմանը իր ուզած ընթացքը, իր դասակարգային շահերի և հասարակական իդէալի տեսակէտով ձև տւեց շարժմանը՝ չխնայելով ոչ մի միջոց, եռանդ և կենք: Թէև իսկոյն պէտք է աւելացնենք, որ այս աննախընթաց յեղաշրջումը նախապատրաստելու գործում շատ կարեւոր և որոշիչ դեր են կատարել սուբիեկտիւ ազդակները, իդէոլոգիան, XVIII դարի միտքը, լուսաւոր փիլիսոփայութիւնը, մի Վոլտեր, մի Ռուսսօ և այլն:

Ահա մեր աչքի առաջ կատարւող ուսումնական մեծ յեղափոխութիւնը: Որքան էլ մենք այս յեղաշրջման առարկայական պատճառների առաջնակարգ դերը ընդգծենք, յամենայն դէպս չենք կարող—և անկարելի է—ուրանալ այն հսկայական աշխատանքը, որ այդ ուղղութեամբ կատարել են հասարակական դեմօկրատ խաւերը և խմբակցութիւնները, ինչպէս և անհնարին է ժխտել այն վճռական դերը, որ խաղացին բանւորութիւնը, գործ-գիւղացիութիւնը, յեղափոխական ինտելիգենցիան և լիբերալ տարրերը: Այս սուբիեկտիւ գործօնները, որ ներկայացնում են ընդհանուր կամք, վճռապէս ազդել են, և աշխատում են ազդել ուսումնական՝ դեռևս չաւարտւած՝ յեղափոխութեան ընթացքի, ձևաւորման վրայ: Այսօր մեր աչքի առաջ կատարւում է մի կատաղի պայքար ոչ միայն զանազան դասակարգերի միջև, այլ և յեղափոխական դեմօկրատիայի շարքերում: Ամեն մի զանգւած, ամեն

մի խմբակցութիւն, ունենալով տարբեր իդէալ, ձեռնարկում է իր այդ իդէալի համաձայն շարժել այսօրւայ պատմութիւնը, ձև և բովանդակութիւն տալ յեղափոխական պրօցեսին:

Բայց դեռ աւելին կարելի է ասել: Շատ յաճախ գիտակից և հանճարեղ անհատներ, հասարակութեան գիտակից փոքրամասնութիւնը, որ նոր խօսք ունին ասելու և նոր ձև՝ պետութեանը տալու—չեն սպասում բնաւ միջավայրի հասունանալուն, օբիեկտիւ ոյժերի զարգանալուն: Նրանք խառնուում են իրերի տւեալ կարգերի մէջ և իրենց ներդրածօն մասնակցութեամբ ձգտում են պատմութիւնը առաջ մղել, պատմութիւն ստեղծել, թէև շատ լաւ գիտեն, որ նրանց սպասում է ներկայ հասարակարգի տէրերի կողմից աքսոր, կախաղան, գիլիոտին և այլն: Սրանք «արեան և անհամար տանջանքների այն հսկայական հնոցներն են, որոնց միջից անցել են յեղափոխիչ գաղափարները», ասում է Քրիստոփոր Միքայէլեանը: Եւ եթէ դրանք սպասէին, որ միջավայրը հասունանար, որ բոլորը «համաձայնէին նրանց հետ, մեր քաղաքակրթութիւնը դեռևս կը լինէր քարէ շրջանում»: Ահա ինչպիսի համոզում ունէր Քր. Միքայէլեանը, Դաշնակցութեան մեծ հիմնադիրը:

Այսպէս է պատմութիւնը, հասարակական պրօցէսը առաջ շարժւել: Նոյնն է և այսօր: Իդէօլոգիան, սուբիեկտիւ ոյժերը, գիտակից անհատները և զանաւածները վճռապէս ազդում են հասարակական և քաղաքական շարժումների ընթացքի և ձևաւորման վրայ, դանդաղեցնում կամ արագացնում են նրանց զարգացումը:

* * *

Այս դեկավար տեսակէտից երևելով, մենք չենք կարող հաշուել անտեսական մատերիալիզմի, Մարքսի հասարակագիտութեան այն դրութեան հետ, թէ մարդկային զարգացումը կախած է բացառապէս արտադրական ոյժերի զարգացումից: Ամբողջապէս ճիշտ չէ այս միտքը: Արտադրական ոյժերի զարգացումը հասարակական միակ պայմանը, մանաւանդ նախապատճառը չէ: Եթէ այդպէս լինէր, եթէ այստեղ այլ գործօններ դեր չխաղային, այն ժամանակ անբացատրելի կը մնար այն երևոյթը, թէ ինչո՞ւ մի երկում, օրինակ, Անգլիայում կամ Գերմանիայում արտադրական ոյժերը հասել են արտակարգ զարգացման, իսկ մի այլ երկրում, օրինակ, Պարսկաստանում կամ Տաճկաստանում նոյն ոյժերը դեռևս գտնուում են զարգացման ամենապրիմիտիւ աստիճանի վրայ: Այստեղ, անկասկած, մեծ դեր են խաղում, և խաղացել են, սուբիեկտիւ ոյժերը, գիտակցութեան ձևերը, իդէօլոգիան, մարքսեան տերմինոլոգիայով՝ հասարակական կառուցածքի վերնաշէնը: Մի տեղ անա այս սուբիեկտիւ գործօնները նպաստում են արտադրական ոյժերի զարգացման, իսկ մի այլ տեղ ընդհակառակը յետ են պահում այդ զարգացումը:

Միւս կողմից, քանի մարդը հասնում է զարգացման աւելի բարձր աստիճանի, այնքան աւելի ազատագրւում է բնութեան կոյր ոյժերի հպատակութիւնից և հանդիսանում է իր կեանքի և ճակատագրի ազատ տնօրինողը: Հին ժամանակ, քաղաքակրթութեան ցածր աստիճանի վրայ, մարդը աւելի ենթա-

կայ էր բնութեան կոյր ոյժերին: Իսկ այժմ մարդկանց աշխատանքը տարւում է մի որոշ ուղղութեամբ՝ ազատագրել միանգամայն բնութեան ոյժերի գերութիւնից: Եւ այդ ազատագրումը կատարւում է այն ձևով և ճանապարհով, որ մարդն աշխատում է ուսումնասիրել բնութեան դեկավար օրէնքները, երեւան բերել բնութեան գաղտնիքները և այդպէս իշխել բնութեան վրայ:

Ինչպէս նկատեցիք, մենք աւելի երկար կանգ առանք սուրբիեկտիւ գործօնների վրայ: Այդ, անկասկած, առանց հիմնաւոր պատճառի չէր: Պատմութեան օրիեկտիւ օրէնքների, օրիեկտիւ ոյժերի դերը, առհասարակ, կասկածի չի ենթարկւում: Ըստ արժանւոյն չեն գնահատւում յատկապէս սուրբիեկտիւ ազդակները:

Այսպէս, մեր ամբողջ վերլուծման արդիւնքը և տրամաբանական հետևութիւնը եղաւ այն, որ սուրբիեկտիւ և օրիեկտիւ ոյժերը կամ գործօնները կազմում են իրապէս պատմութեան երկու կողմերը, որոնք իրար չեն ժխտում, այլ անբաժան են և ներկայացնում են մի ներդաշնակ ամբողջութիւն: Ն. Յ. Դաշնակցութիւնը հէնց այս երկու «ոյժերի դաշնագրութեան մէջ է տեսնում զբաւականն այն յաղթանակի, որ պիտի տանի աշխատաւոր մարդկութիւնը թէ բնութեան կոյր ոյժերի և թէ հասարակութեան մէջ եղած անարդարութեան դէմ»:

Այս խօսքերի մէջ ընդգծւում է Ն. Յ. Դաշնակցութեան աշխարհայեացքի սիմքեզիկ բնորոշ կողմը: Այս մոնիստական հայեցակէտը ճանաչում է պատմութեան այդ երկշարք ոյժերի փոխազդեցութիւնը, աւելի ճիշտ, համարժէք լինելը և մանաւանդ իրար

պատկանելի: Այս սինթետիկ, համադրական մոնիզմը հետզհետէ արագ նւաճումներ է անում գիտութեան մէջ, պատմութեան և փիլիսոփայութեան, սոցիոլոգիայի և հոգեբանութեան և այլն:

Այստեղ երևան են գալիս այն երկու յաւիտենական կատեգորիաները, որոնց վրայ այնքան խորհել են դարերով, այսինքն՝ ճշմարտութեան և արդարութեան, օրիեկտիւ ճշմարտութեան և սուրբիեկտիւ ճշմարտութեան կամ՝ Կանտի խօսքերով՝ զուտ և գործնական բանականութեան կատեգորիաները:

X

ՄԵԽԱՆԻԶՄ ԵՒ ՆՊԱՏԱԿԻ ՏԵՍԱԿԷՏԸ

Մեխանիզմը մէկն է այն կօսմօլօգիական պրօբլէմերից, որոնց ոկիղբը ձգւում է մինչև հին ժամանակները:

Իհնչն է կազմում մեխանիզմի էութիւնը,

Այս աշխարհայեցողութիւնը ճանաչում է միմիայն ազդող պատճառներ:

Մի շարք մտածողներ, հին ժամանակներում՝ Դէմօկրիտ, Էպիկուր և այլն, յաջորդ դարաշրջաններում՝ Կօպերնիկոս, Կեպլեր, Հօբբէս, Լամետրի, Հօլբախ և այլն, իսկ այժմ՝ մատերալիստները, կանգնած են մեխանիզմի տեսակէտի վրայ: Նրանք պաշտպանում են անհրաժեշտութեան և մեքենայական պատճառականութեան սկզբունքը: Այն ամենը, ինչ տեղի է ունենում աշխարհում, բնութեան մէջ, տիեզերքում, ընդգրկած բովանդակ բնական և հասարակական երևոյթները և պրօցէսները,— այդ բոլորը անհրաժեշտօրէն որոշւած է, այդ ամենը հանգչում է մեխանիզմի սկզբունքի վրայ: Ամեն եղելութիւն, Փիզիքական թէ հոգեկան, դիտւում է իբր մեքենայական շարժում, կատարւած աննպատակ, կուրօրէն:

Շարժում, անվերջ շարժում, մատերիայի, առօնների շարժում . . .

Կարճ, աշխարհը այլ բան չէ, եթէ մի կօլը մեխանիզմ, մի հսկայական և խիստ բարդ անիւ, որը յաւատ առաջ է գլորւում՝ առանց որ եւ է նպասակի, առանց որ եւ է դիսաւորութեան:

Ահա այս մեքենայական պատճառակութիւնը կազմում է բնագիտութեան զէնքը, նրա ղեկավար սկզբունքը: Բնագիտութեան սահմանում բոլոր պրօցէսները և եղելութիւնները անհրաժեշտօրէն և կառույցով որոշւած ու պայմանաւորւած են: Տիրողն է մեքենայական օրինաչափութիւնը:

Մեխանիզմի տեսակէտը ընդունելի է միայն այն չափով, ինչ չափով նա տարածւում է անօրգանական աշխարհի, բնութեան երևոյթների և շարժումների վրայ: Անօրգանական աշխարհում, ճիշտ է, տեղի չեն ունենում դիտաւորեալ և նպատակադրւած ազդեցութիւններ: Կատարւող բոլոր շարժումները և երևոյթները կրում են տարբերակ բնոյթ: Բնութիւնը չունի—և չի ճանաչում—որեւէ մօտաւոր կամ հեռաւոր նպատակ և գիտակցաբար նրան ձգտում: Այստեղ գործում, ղեկավարում է տարերային ոյժը: Այստեղ թաղաւորում է բնագիտական-մեխանիկական պատճառականութիւնը:

* * *

Այս չափով իրաւունք ունեն մեխանիզմի հետեւորդները: Բայց երբ նրանք ուզում են այդ սկզբունքը ընդհանրացնել, տարածել նաև կենդանական, նամանաւանդ մարդկային աշխարհի վրայ, բայց երբ

նրանք ուզում են այդ սկզբունքը կիրառել նաև հոգեկան կեանքի օրէնքների՝ անհատական և սօցիալ, ինչպէս և հասարակական երևոյթների վրայ, ահա այստեղ նրանք չարաչար սխալւում են:

Մենք տեսնում և ճանաչում ենք մարդկային և կենդանական աշխարհում նպատակ, տենդենց, մի տեղ աւելի, մի այլ տեղ՝ պակաս գիտակցական, Այստեղ մենք փաստապէս և անմիջօրէն գործ ունենք գիտակից էութիւնների և նրանց հոգեկան արգասիքների ու գործողութիւնների հետ. այստեղ ի նկատի է առնւում արդէն նոյնպէս նպատակաբանական գիտողութիւնը:

Մարդու հոգին ունի իր իւրայատուկ օրէնքները, որոնց անկարելի է բացատրել բացառապէս մեխանիզմի սկզբունքով, և որքան մի էութիւն հոգեկան աւելի բարդութիւն է ներկայացնում, այնքան աւելի քիչ է ենթարկւում մեխանիզմին, այնքան աւելի քիչ ազդւում զրաի աշխարհից: Եւ մարդը, իբր այդպիսին, իբրև բարդ հոգեկան ոյժեր՝ զգացում, կամք և գիտակցութիւն՝ կրող էութիւն, իր հետ մտցնում է հասարակական կեանքում մի անհատնում շարք տենչերի, ձգտումների, տենդենցների, նպատակադրումների, մի ամբողջ սուբիեկտիւ տելէօլօգիա, և զրանից հասարակական փոխ-յարաբերութիւնների մէջ առաջանում է մի ամբողջ սօցիալական տելէօլօգիա (նպատակաբանութիւն):

Եւ եթէ, իբրաւի, ամբողջովին ճիշտ լինէր մեքենայական աշխարհայեցողութեան պնդումը, այն ժամանակ մենք իրաւունք չէինք ունենալ խօսել պատասխանատւութեան, պարտականութեան և մօրալի մասին, չէ՞ որ ըստ մեխանիզմի ամեն ինչ

կառուալ որոշւած է, չէ՞ որ մարդը կոյր գործիք է արտաքին հանգամանքների ձեռքում: Եւ առհասարակ մեխանիզմի համար պարտականութեան գիտակցութիւնը մնում է որպէս մի առեղծւած:

Այդպէս չէ մարդկային հասարակութեան մէջ, սօցիալ-պատմական երևոյթների շրջանում: Սօցիալ-պատմական երևոյթներն ունեն իրենց իւրայատուկ օրէնքները, իրենց յատուկ պատճառականութիւնը:—

Մարդիկ, իբր միտք և գիտակցութիւն կրողներ, ձև են տալիս օրիեկտին, ուղղութիւն և գոյն բնութեան տարերային երևոյթներին ու դիպածներին և մղում դէպի մի կէտ-նպատակ: Նրանք իրենց են ծառայեցնում բնութեան ոյժերը, կանոնաւորում տարերային ոյժի առաջացրած անկանոն փոփոխութիւնները, ելնելով միշտ էլ որոշ նպատակից: Այստեղ, սօցիալական երևոյթների մէջ, մարդկային գործողութիւնների աշխարհում խիստ սահմանափակւում է բնագիտական-մեխանիքական պատճառականութիւնը: Այս սահմանում տիրողն է նպատակի տեսակէտը, սօցիալ-պատմական պատճառականութեան և անհրաժեշտութեան սկզբունքը: Պատմական երևոյթները, առհասարակ պատմական ընթացքն ունի իր ուրոյն օրինաչափութիւնը՝ սօցիալ-պատմական, բայց երբէք մեքենայական:

Բայց այդ երկու սկզբունքները՝ բնագիտական-մեխանիքական և սօցիալ-պատմական, չեն ժխտում միմիանց, այլ լրացնում, ճիշտ այնպէս, ինչպէս լրացնում են կօլլեկտիւ և անհատական կամեցողութիւնները, որի մասին խօսք կը լինի: Եւ այդ սօցիալ-պատմական օրինաչափութեան համապատասխանում է մի որոշ իդէալ, որը գնում են մարդիկ: Այստեղ անխու-

սափելիօրէն շեշտւում է նպատակաբանական տարրը:

Այդ գերագոյն իրէական է միշտ էլ առաջնորդում անհատներին, մարդկային խմբակցութիւններին և հաստատութիւններին: Ամենքը սօցիալական-պատմական կեանքում դեկավարւում են այդ իրէալի տեսակէտով: Այստեղ ուժգին շեշտւում է սուբիեկտիւ տեսակէտը: Եւ ի դուր չէ, որ ամեն մի պատմական երկ սուբիեկտիւ շեշտ ունի: Պատմագիրը ոչ թէ օբիեկտիւ կերպով նկարագրում է միայն պատմական փաստերը և խաղաղ, անգործ հոգով վերլուծման ենթարկում, այլ, ընդհակառակը, նա աւելի քննադատում, գնահատում է իր սօցիալական իրէալի տեսակէտով. նրան զբաղեցնում է աւելի այն, ինչ պիտի լինի՝ սօցիալական Հրամայականը: Սա ամբողջապէս արդիւնք է որոշ տեսակէտի, իսկ տեսակէտները սուբիեկտիւ են արդէն:

Եւ յիշատի, ամեն մի պատմական աշխատութիւն անպայման սուբիեկտիւ է: Ով ճանում է օբիեկտիւութեան մասին, նա իրօք ինքնախաբէութեան մէջ է գտնւում: Չը կայ օբիեկտիւ պատմական երկ: Եթէ կայ այդպիսին, նշանակում է գրողը չունի որեւէ տեսակէտ, իսկ դա էլ անհնարին է ընդունել: Ամեն մի անհատ ունի իր իւրայատուկ տեսակէտը, իր տէնկալութիւնը կեանքից, ի հարկէ՝ իր հասկացողութեամբ: Եւ այդ տեսակէտով էլ նա լուսաբանում է հասարակական-պատմական երեւոյթները և փաստերը: Երբ մենք թերթում ենք մի պատմական երկ, լինի նա խոշոր թէ մանր, իսկոյն մեր աչքին է զարնում այդ մատնանշած յատկանշական կողմը: Միևնոյն հասարակական երեւոյթը, միևնոյն պատմական շրջանը բոլորովին և հիմնօրէն տարբեր բնութ, տարբեր բո-

վանդակութիւն կրում տարբեր հայեցողութիւններ ունեցող պատմախոյզների մօտ: Միևնոյն երեւոյթը մէկի համար յետադիմական է, միւսի համար՝ առաջադիմական:

Այս բոլորը անմիջական արդիւնք է նրանց տէնկալութեան կեանքից, արդիւնք այն իրէալի, որ նրանք ունեն կեանքի վերաբերմամբ և որը իրականացնելու համար չեն խնայում ոչինչ:

* * *

Մեր իրէալն է անհատի կատարեալ, բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը հասարակութեան մէջ: Այն, ինչ որ տանում է դէպի այդ իրէալի իրականացումը, պրօգրեսիւ է մեզ համար, իսկ հակառակ քայլը՝ ընդդէմս: Մենք կուրծ ենք այն բանի դէմ, ինչ խանգարում է դէպի մեր իրէալը տանող ընթացքը և, ընդհակառակը, ոյժ տալիս այն բոլորին, ինչ նպաստում, հարթում է մեր իրէալի ուղին: Դրական է այն, ինչ մեր իրէալի օգտին է խօսում, բացասական է այն, ինչ՝ ընդդէմ: Եւ մենք գործադրում ենք մաքսիմումը մեր եռանդի և ոյժի, մտքի և զգացումի՝ իրէալի իրականացման համար: Մեր բոլոր գործողութիւնները բացառապէս ուղղւած են այդ բեռակէտին. և մենք փաստապէս, ինչպէս ամեն մէկը առհասարակ, մտցնում ենք հասարակական երեւոյթների շրջանում որոշակի տեսակէտ, հետևապէս նպատակ, մի սօցիալ-պոստական անհրաժեշտութիւն:

Սօցիոլոգիայի, քաղաքականութեան, էսթետիկայի և էթիկայի շրջանակում, ուր մենք գործ ունենք զլիսաւորապէս արժէքների և գնահատումների

հետ, տիրում է գլխաւորապէս նպատակի տեսակէտը: Այստեղ խիստ սահմանափակում է օրինելով տարրը նպատակադրող սուբիեկտով: Սօցիոլոգիայի, էթիկայի, էսթետիկայի և քաղաքականութեան մէջ տիրում է ոչ միայն այն, ինչ որ կայ, ինչ իրական է, այլ և այն, ինչ որ պիտի լինի: «Արժէքներից է աճում, զարգանում և արժէքների վրայ հանգչում մեր հոգեկան կեանքը», — ասում է Ռիլ: Իսկ չը կայ արժէք առանց տելեօլոգիայի: Մեր հոգու բովանդակ զարգացումը, մեր գործողութիւնների կեանքը հիմնւած է նպատակաբանական սկզբունքի վրայ: Իսկ առանց այս սկզբունքի, կամ «առանց այդ արժէքների կը լինէր մեր կեանքի նաւարկութիւնը յիրաւի առանց կողմնացոյցի» (Ռիլ): Բայց մենք ունենք այդ կողմնացոյցը: Մարդկային գործողութիւնները ներկայ քաղաքակրթութեան աստիճանի վրայ այնչափ ազատ են, որ մարդը կարող է իր բախտը յայտնի չափով տնօրինել և իր կեանքի երթը որոշել: Եւ որքան բարձրանում է քաղաքակրթութիւնը, մարդու գիտակցութիւնը, այնքան աւելի նա տէր է լինում իր բախտի տնօրինութեան, իր ճակատագրին:

Իդէալը կայ. ոչ ոք չի կարող ժխտել: Իսկ իդէալի գոյութիւնն արդէն ինքնին, չենք ասում բացասում, սակայն սահմանափակում է մեխանիզմի սկզբունքի: Եթէ, յիրաւի, մեր բովանդակ գործողութիւնները անհրաժեշտօրէն որոշւած լինէին, եթէ ամեն ինչ ենթարկւած լինէր «իրերի բնական-տարբային ֆաթալ ընթացքին» և մարդն էլ լինէր այդ ընդհանուր հոսանքի մի անկամ և կրաւորական մասնիկը, այն պարագային մենք ամենևին աոիթ էլ չէինք ունենայ խօսել մօտաւոր և հեռւոր նպատակ-

ների և երազել սօցիալական իդէալի մասին:

Բայց այդ իդէալը գոյութիւն ունի, և ամեն մէկի սիրտը բաբախում է նրա համար: Առանց այդ իդէալի ուղղակի անհնարին կը լինէր հասարակական երեւոյթների, պատմական ակտերի և դիպածների ճշգրիտ հասկացողութիւնը, նրանց ըմբռնումը: Հասարակական կեանքի մէջ մարդը գնահատող է. բոլոր դիտողութիւնները վերին աստիճանի սերտ կապւած են բարոյական արժէքների և գնահատումների հետ: Մարդը չի կարող անտարբեր մնալ հասարակական-քաղաքական երեւոյթների շրջանակում, լինել լուռ հանդիսատես և «օրինելով» դիտող: Այդ անկարելին է: Մարդը, ընդհակառակը, տարւում, ոգևորւում է սօցիալական-քաղաքական փաստերով և երեւոյթներով, նա դատում և դատւում է, լայիս և ինդուում, տանջւում և յուզւում: Ահա այս տարրերն են, որ հնարաւոր են դարձնում սօցիալ-քաղաքական երեւոյթների և շարժումների հասկացողութիւնը:

* * *

Եւ կարելի է հաստատապէս ու առանց վերապահութեան պնդել, թէ չը կայ, և չի կարող լինել, մի անհատ, մի խմբակցութիւն կամ ընկերակցութիւն և մի կազմակերպութիւն առանց մօտաւոր և հեռւոր նպատակի: Նայէք և դիտէք գէթ մի բոպէ ձեր շուրջը եռող և պայքարող կեանքը, և իսկոյն կը համոզւէք: Տիրողը տելեօլոգիական տարրն է, նպատակի տեսակէտը կամ, որ միևնոյնն է, սօցիալ-պատմական անհրաժեշտութիւնը:

«Խմբակցութիւն», «ընկերակցութիւն», «կազմակերպութիւն» հասկացողութիւններն արդէն ինք-

նին նպատակաբանական միութիւններ են: Այդ երեւոյթին մենք ակնառես ենք ինչպէս զարգացման ամենապրիմիտիւ աստիճանի վրայ կանգնած մարդկային հասարակութեան, նոյնպէս XX քաղաքակիրթ դարի շէմքում կանգնած հասարակութեան մէջ: Մի տեղ պակաս գիտակցական, միւս տեղ՝ աւելի բարձր գիտակցական: Բայց էապէս երևոյթը նոյն բնոյթն է կրում, կեանքը միևնոյն խնդիրն ունի—նպատակ: Այդ բոլոր միութիւնները որոշ նպատակի ծնունդ են և որոշ նպատակի համար են, որոնք՝ երևան գալով կեանքի մէջ՝ աշխատում են երեսն ընդհանուր նպատակի իրագործման համար: Հասարակութիւնն ինքն ևս այդպիսին է, մի կազմակերպութիւն որոշ նպատակի համար:

Սօցիալ-դեմօկրատիա. սա մի կուսակցութիւն է, որոշ մարդկանց միութիւն, մի կազմակերպութիւն: Նրա հիմքում կայ դրւած նպատակի սկզբունքը, թէև իրենք սօց.-դեմօկրատիայի թէօրեականները իրենց համարում են «իրերի բնական ընթացք»ի հետևորդներ: Սօց.-դեմօկրատական կազմակերպութիւնը՝ իբր այդպիսին՝ ունի իր մօտաւոր և հեռավոր նպատակը, իր միներմալ և մաքսիմալ ծրագիրը. նա ունի նաև իր իդէալը: Իսկ այդ միներմալ և մաքսիմալ ծրագիրները, ըստ էութեան, այլ բան չեն, եթէ արժէքների և գնահատումների, հետևապէս, նաև տեղեւորության անմիջական և հարազատ արդիւնք: Սօցիալ-դեմօկրատիան մտնելով հասարակական-քաղաքական կեանքի մէջ, առաջադրում է իր միներմալ և մաքսիմալ պահանջները, խտացնում է իր շարքերը և պայքար մղում նրանց իրականացման համար ամենուրեք՝ պարլամենտներում, սէյմերում, մամուլի մէջ և այլն: Նա

չի կանգնում ինդիֆերենտ, հեռից անմաս դիտող դերի մէջ և ոչ էլ ձեռքերը ծալած սպասում «իրերի բնական տարերային ֆաթալ ընթացքին»:

Ի՞նչ են ներկայացնում այս բոլորը:—Նախ այն, որ սա մի աչք ծակող հակասութիւն է մարքսեան «իրերի բնական ընթացքի» և, երկրորդ, մի ամբողջ սօցիալական տեղեւորության, ոչ օբիեկտիւ, այլ սուբիեկտիւ: Ինչպէս որ Կ. Մարքսը՝ իբրև խոշոր միտք և խորունկ գիտակցութիւն կրող անհատ՝ հասակումն է, մինչև իսկ բացասումն այն դրութեան, թէ անհատի դերը պատմութեան մէջ հաւասար է գերօրի, նոյնպէս և սօցիալ-դեմօկրատիան՝ իբրև կազմակերպութիւն՝ հակասումն է մարքսեան մեխանիզմի, իրերի «բնական ընթացքի»:

Այսպիսով նրանք ևս իրօք կանգնած են այն տեսակէտի վրայ, ինչ մենք ենք ներկայացնում: Նրանք ևս հաստատում են սուբիեկտիւ տեղեւորության սկզբունքը:

Մենք, կարծում ենք, իրաւունք ունենք, մինչայժմեան անալիզից եզրակացնել, որ նպատակի տեսակէտը, սօցիալ-պատմական անհրաժեշտութիւնն է իշխում հասարակութեան մէջ, սօցիալ-պատմական երևոյթների սահմանում:

Նւ միւս կողմից, քանի մարդը աւելի ճանաչի բնութեան և հասարակական օրէնքները, քանի բարձրանայ կուլտուրայի մակերևոյթը, այնքան աւելի կը շեշտւի նպատակի տեսակէտը, հետևապէս, մարդու կատարելիք դերը:

Բայց անցնենք մասսաների և անհատների դերին պատմութեան մէջ, մի հարցի վերլուծման, որ անմիջական և շատ սերտ կերպով կապւած է այս խնդրի հետ:

XI

ԱՆՀԱՏԻ ԵՒ ՄԱՍՍԱՅԻ ԴԵՐԸ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Այն հարցը, թէ պատմութիւնը անանուն մասա-
ներն են որակում թէ անհատները, զբաղեցրել է, և
զբաղեցնում է, ամեն մի պատմագէտի, ամեն մի
պատմափիլիսոփայի և հասարակագէտի:

Տիրում են տարբեր տեսակէտներ, իրար տրա-
մագծօրէն հակադիր ուղղութիւններ: Կան պատմա-
գէտներ և սօցիոլոգներ, որոնք բացասում են անհա-
տի դերը պատմութեան մէջ և շեշտում են միմիայն
մասսայի նշանակութիւնը, դարձնելով նրան որպէս
առաջ-մղիչ ուժ պատմական էվօլիւցիայի, առհասա-
րակ սօցիալական-քաղաքական զարգացման: Այդպիսի
մտածողներ են Կօնդօրսէ, Բօկլլ, Կօնտ, Մարքս և
ալին:

Մտածողների այս շարքի հանդէպ կան և այնպիսի
դէմքեր, նոյնքան հեղինակաւոր և խոշոր, որոնք,
ընդհակառակն, ճանաչում են անհատի, «մեծ մարդ-
կանց» դերը պատմական պրօցեսի մէջ և մերժում
մասսայի նշանակութիւնը: Օրինակ, Թօմաս Կարլէյ-

լի, անդլիացի յայտնի պատմաբան-փիլիսոփայի և
«Հերոսները ու հերոսականը պատմութեան մէջ» աշ-
խատութեան հեղինակի համար պատմութիւնն այլ
բան չէ, քան անհատների, մեծ մարդկանց կենսա-
գրութիւնների գումարը:

Բայց մենք չենք ընդունում այդ երկու տեսակէտն
էլ, գտնելով թէ մէկը և թէ միւսը խիստ ծայրայեղ
և միակողմանի, ինչպէս և իրականութեանը չը հա-
մապատասխանող: Մենք ճանաչում ենք թէ մասսա-
ների և թէ անհատների դերը պատմութեան մէջ: Եւ
ճշմարտութիւնը մեր կողմն է: ✓

Բայց անցնենք ապացուցութեանը և լուսաբա-
նութեանը, տեսնենք ինչ չափով այդ տեսակէտները
համապատասխանում են իրականութեանը: Կանգ առ-
նենք դրանց վրայ դատ-դատ:

Առաջին տեսակէտը, որը բացասում է անհատի
դերը, միակողմանի է, անգամ սխալ, որովհետեւ ան-
հատները գերօրի արժէք չունեն պատմական ընթաց-
քի համար, պատմական էվօլիւցիայի մէջ: Բայց ճիշ-
քեր են այդ անհատները, որ դեր են խաղում պատ-
մութեան մէջ:—Նրանք սոսկական անհատներ չեն,
այլ կրօններ մտաւոր և քաղաքական գիտակցութեան:
Եւ խօսել անհատի դերի մասին, նշանակում է խօ-
սել մտաւոր և բարոյական գիտակցութեան մասին:
Մտաւոր և բարոյական գիտակցութեան տէր անհատ-
ները խնայաւոր են վերաբերում հասարակական
շարժումներին, պատմական առօրէական կեանքի
երևոյթիւնին: Այսպէս, պատմութեան մէջ վճռական
դեր խաղացող անհատները քննադատօրէն մտածող
անհատներն են: Անհնարին բան է այդպիսի անհատ-
ների դերը առանց այլ և այլութեան ժխտել: Ճշմար-

տութեան դէմ մեղանշել է նշանակում անգիտանալ
այն դերը, որ խաղացել է պատմութեան մէջ մի
Ալէքսանդր Մակեդոնացի, մի Ֆրիդրիխ II, մի Նա-
պոլէօն: Աւելի ևս անմիտ է ասել, թէ Մահմեդը և
Քրիստոսը, իբրև անհատներ և կրօնի հիմադիրներ,
վճռական դեր չեն խաղացել պատմական զարգաց-
ման ընթացքի մէջ: Անունները կարելի է անընդհատ
շարունակել: Ճշմարտութեան դէմ մեղանշել չէ նշա-
նակում հապա, երբ մարդիկ անգիտանում են Ամե-
րիկայի յայտնագործումի այն անազին նշանակութիւ-
նը: Ոմանք նկատում են, թէ այդ գիւտը, եթէ չը
կատարէր Գոպերնիկոսի ձեռքով, կը կատարէր մի
ուրիշի միջոցով. դա միայն ժամանակի խնդիր էր:
Եւ այդ ձևով նրանք ձգտում են նսեմացնել այդ
մեծ յայտնագործումի առաջնակարգ արժէքը: Բայց
այդ «սրամիտ» առարկոյնները գիտակցաբար անգի-
տանում են մի շատ կարևոր հանգամանք. այն, որ
մինչև Ամերիկայի յայտնագործումը մի ուրիշի մի-
ջոցով կը կատարէր, պատմութիւնը, կուլտուրան
որոշ չափով կանգ առնել կը նշանակէր, մի խիստ
հարւած կլինէր այդ կուլտուրայի զարգացման հա-
մար:

Դառնանք մեր օրերին: Այս համաշխարհային
պատերազմի ընթացքում և ռուսական յեղափոխու-
թեան մէջ երևան եկան դէմքեր, որոնք, որպէս գա-
զաթներ, բարձրանում են մեր օրերի պատմական
ֆօնի վրայ: Նրանք արդէն որոշ պատմութիւն են
ստեղծել իրենց շուրջը: Ահա մի Ժօֆֆր, ահա մի
Հինդենբուրգ, և այլն: Ահա, վերջապէս, ռուսական
մեծ յեղափոխութեան վետերանը, անսման հերոսը՝
Կերենսկի: Որպէս մտաւոր և բարոյական գիտակցու-

թիւն կրող, որպէս քննադատօրէն մտածող անհատ,
Կերենսկին իր ակտիւ մասնակցութեամբ ռուսական
այսօրւայ պատմութեանը, ներկայ անցուդարձերին
տալիս է նոր ընթացք և այդ ձևով ստեղծում նոր
պատմութիւն: Քննադատօրէն մտածող անհատների
ոյժը կայանում է հէնց նրանում, որ նրանք կարո-
ղանում են պատմական մօմենտները, քաղաքական-
հասարակական շարժումները ձևակերպել և իրենց
ակտիւ մասնակցութեամբ այդ շարժումներին համա-
պատասխան ընթացք և մղում տալ:

Այս յիշած փաստերն արդէն ինքնին ջրում են
կօլլեկտիւիստների միակողմանի պնդումը և բոլորու-
մին անտարակուսելի դարձնում անհատների՝ խորունկ
գիտակցութիւն և, որ գլխաւորն է, շեշտած կամե-
ցողութիւն ընդգրկող անհատների նշանակութիւնը
պատմութեան մէջ: Բայց այդ այդպէս լինելով հան-
դերձ, մենք չենք անգիտանում, իհարկէ, այն սօցիա-
լական և տնտեսական-քաղաքական, ինչպէս բնական
պայմանների նշանակութիւնը, որոնց մէջ ապրում
են այդ անհատները: «Պայմաններն են ստեղծում
մարդկանց»: Այս միտքը ունի անկասկած ճշմարտու-
թեան իր որոշ բաժինը, բայց, միևս կողմից, ճիշտ է
նաև այն դրութիւնը, թէ մարդը չի ուզում ստրուկ
լինել պայմաններին. նա ստեղծում է պայմաններ,
ազդում այդ պայմանների վրայ: Չէ որ նոյն այդ
պարագաներին պատկանում են նաև անհատական
ընդունակութիւնները, մանաւանդ մարդու կամեցո-
ղութիւնը և գիտակցութիւնը:

Այսպէս, հասարակական և բնական պայմաննե-
րը՝ մի կողմից և անհատները իրենց կամեցողու-
թեամբ և գիտակցութեամբ՝ միևս կողմից, գտնւում

են փոխադրեցութեան մէջ: Հասարակական միջավայրի նշանակութիւնը, ուրեմն, երբեք չի բացաւում, բայց նրան չի արւում միակ և բացառիկ տեղ: Վանդելիդը յաջող և սրամիտ կերպով նկատում է. — «անհասկանալի է, երբ ասում են, թէ Բեթովենի կամ Մօցարտի սիմֆօնեան, Կանտի կամ Սպինոզայի մետաֆիզիկան, Քրիստոսի կամ Մահմեդի կրօնը արդիւնք են այն հասարակական միջավայրի, ուր նրանք ծնւել են: Այդ նոյնը կը լինի, եթէ ասենք, թէ բոյսերը արդիւնք են հողի այն պատճառով, որ սերմը կարիք ունի հողի, որպէսզի ծիլ տայ»:

Այստեղ, ուրեմն, նկատողութեան են գալիս թէ միջավայրի պայմանները և թէ այն, ինչ յատուկ է անհատին, այն, ինչ անհատական է: Որոշ չափով ճիշտ է, իհարկէ, այն դրութիւնը, թէ ամեն ժամանակ իր մարդիկն է առաջ բերում, բայց սա չի կարելի օրէնքի վերածել: Երբեմն մի զօրավարի մահը խիստ վճռական դեր է խաղում մի պատերազմի վերջնական ելքի վրայ, և չի կարողանում մէկը նրան փոխարինել: Գօգօլը այրեց իր «Մեռած հողիներ» պօէմի երկրորդ մասը, նրա միջավայրը չը ստեղծեց այն նորէն:

Այն էլ անկասկած է, որ քանի գնում, այնքան աւելի է ազատագրւում անհատը, այնքան աւելի նա անկախ է դառնում միջավայրից, բնական պայմաններից: Մարդու բարոյական և մտաւոր գիտակցութիւնը ու կամքը յաղթանակում է: Մեխանիզմը, ընդհակառակը, յետ է մղւում:

* * *

Շեշտելով և խնամքով ընդգծելով անհատի դերը, մենք չենք անգիտանում նոյնպէս մասսաների նշանակութիւնը, ինչպէս այդ մասին արդէն յիշատակեցինք: Հասարակական շարժումների, պատմական զարգացման մէջ մասսաների դերը, գոնէ մեզ համար, ամեն տարակուսանքից վեր է: Մասսան ևս իր ցանկութիւններն է առաջադրում և նրանց համար պայքարում: Նա ևս բերում է հասարակական կեանքում իր կամեցողութիւնը — կօչեկօ կամեցողութիւն: Բայց մեզ համար կօչեկաբէ և անհատական կամեցողութիւնները, որ մենք իբր աւել ենք ընդունում, չեն ներկայացնում իբր հակադիր, իրար ջնջող ոյժեր, այլ, ընդհակառակն, իրար լրացնող, ամբողջացնող: Միայն կան տարբերուող գծեր անհատի և մասսայի ազդեցութեան մէջ պատմական ընթացքի վրայ: Ծիշտ է, ժողովրդական զանգւածները, հսկայական մասսաները ազդում են պատմութեան ընթացքի վրայ, բայց ոչ այնքան գիտակցօրէն, որքան մեխանիզմը: Խորունկ գիտակցական, պլանաչափ գործունէութիւն չը կայ մասսայական շարժումների մէջ: Ծիշտ է, առանց մասսայի անհասկանալի է պետութիւն, հասարակութիւն, բայց նրա աշխատանքը պետական գործերի մէջ ստեղծագործական չէ, որքան աշխատանքը մեծ մարդկանց, քննադատօրէն մտածող անհատների, որոնք կոչւում են յաճախ իրաւամբ իրենց «ժամանակի գիտակցութիւնը»: Նոյնը պէտք է ասել և խոշոր, յեղաշրջող իդէաների վերաբերմամբ: Ծիշտ է, ժողովրդական զարգւածները

անագին դեր են խաղում այդ իդէաների տարածման գործում, բայց այդ իդէաների *ստեղծագործութեան* մէջ նրանց մասնակցութիւնը անհամեմատ փոքր, անհամեմատ աննշան է՝ անհատի ստեղծագործական խոշոր ոյժի հանդէպ: Այսպիսի պարագայում մասսաներն աւելի օգնողներ են, քան ստեղծագործութեան աշխատակիցներ՝ հաւասար ոյժով և հաւասար չափով: Բայց յամենայն դէպս մասսաների ազդեցութիւնը նոյնպէս անտարակուսելի է: Եւ Թօմաս Կարլէյլի կարծիքը միանգամայն միակողմանի է և սխալ: Նա բացասում է մասսաների դերը, ինչպէս և սօցիալական-քնական պայմանները:

Այս բոլորից պարզ է, որ պատմական զարգացումը կարիք ունի և՛ ժողովրդական մասսաներին, և՛ անհատներին: Իդէաները, կարելի է ասել, առաջանում են անհատականօրէն, իսկ տարածւում են կօլլեկտիւ: Այնպէս որ անհատների և մասսաների մէջ տիրում է մի հաստատուն փոխազդեցութիւն: Նրանք փոխադարձաբար իրար պայմանաւորում են և լրացնում: Եւ սխալ է միանգամայն կարծել, թէ անհատական կամեցողութիւնը միշտ էլ ընդդէմ է գնում կօլլեկտիւ, մասսայական կամեցողութեան: Երբեք. նրանց կամեցողութիւնները յաճախ գուզադիպում են միմիանց և փոխադարձաբար իրար օգնում: Բայց շատ անգամ աւելի ուժեղ է լինում անհատական կամեցողութիւնը և ուղղութիւն է տալիս ժողովրդական զանգւածներին: Անհատներն են ձևակերպում, ի մի գումարում ժողովրդական զանգւածների, մասսաների մէջ ցրւած մտքերը, եղած անորոշ և չը ձևաւորւած տրամադրութիւնները, և այդպիսի դէպքում նրանք աւելի դիւրութեամբ կարողանում են մասսաներին որոշ ուղղու-

թեամբ առաջ մղել:

Այսպէս, անհատները և մասսաները միշտ էլ սերտ և բազմապիսի փոխյարաբերութեան մէջ են գտնւում, փոխադարձաբար ազդում իրար վրայ, միմիանց մղումներ տալիս:

Այստեղ, ինչպէս տեսնում էք, դարձեալ արտայայտւում է ցայտուն կերպով մեր աշխարհայեցողութեան սինթետիկ գիծը:

XII

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԻՆՏԵՆՏԻՅԵՆՏԻԱՆ

Աշխատաւոր մարդկութեան ազատագրման մէջ մեծ և վճռական դերը խաղում են արդիւնագործական բանւորութիւնը, աշխատաւոր գիւղացիութիւնը և յեղափոխական ինտելիգենցիան:

Այս է աւելած Հ. Յեղ. Դաշնակցութեան ծրագրում:

Եւ այս երեք խաւերն են կազմում մեր կուսակցութեան կազմը: Այստեղ մեզ զբաղեցնում է յեղափոխական ինտելիգենցիան:

Հասարակութեան մտաւորական խաւը, գիտութեան և մտքի ներկայացուցիչները չեն կազմում մի միապաղաղ զանգւած: Բոլոր մտաւորականները չունեն միևնոյն հասարակական դրութիւնը, ինչպէս և միևնոյն աշխարհայեցութիւնը և իդէալը: Հասարակութեան այս խաւը՝ ինտելիգենցիան խիստ շերտաւորւած է, դիրքի և շեշտւած մտածողութեան տարբերութիւնը մեծ է:

Ինտելիգենցիայի մի խոշոր մասը, բարձր ինտելիգենցիան, մեզ հետ չէ և որևէ կապ չունի աշխատաւոր մարդկութեան հետ: Անգամ աւելին: Նրանք դեմոկրատիայի թշնամիներն են: Այդ բարձր մտաւո-

րակաշռութիւնը, արխտոկրատ ինտելիգենցիան իր սօցիալական դրութեամբ անկարող է ըմբռնել աշխատաւոր մասսաների շահերը և հանդիսանալ այդ շահերի իսկական արտայայտիչը և անկեղծ պաշտպանը:

Բարձր մտաւորականները ներկայանում են տիրող կարգի, իշխանութեան պաշտպանը, թագաւորների և կայսրների նեցուկը: Նրանք իրենց մտքի ամբողջ ստեղծագործական թափը, իրենց ընդունակութիւնները, վերջապէս, իրենց անունը և փառքը ծառայեցնում են կապիտալիստների տիրապետութեան ուժեղանալուն և նրանց դասակարգային շահերին:

Կապիտալիստները շատ ճարպիկ են շահագործման խնդրում: Նրանք լինելով տէրը դրութեան, օրէնք և իրաւունք ստեղծող, կարողանում են շահագործել, ծառայեցնել իրենց շահերին անգամ ամեն ինչ, գիտութեան մարդկանց, մտքի տիրաններին, վերջապէս, իրեն՝ գիտութիւնը: Այս ձևով, գիտութիւնը, գեղարւեստն ու փիլիսոփայութիւնը ստանում են դասակարգային գոյն, դասակարգային բովանդակութիւն: Շատ խոշոր դէմքեր անգամ դարձել են նրանց կամակատարները, անգամ ստրուկները: Այդպիսիները եղել են ոչ միայն բարձր, այլ և միջին խաւի մտաւորականներից: Այդպիսի օրինակներ շատ է տւել պատմութիւնը, ամեն մի ժողովրդի ինտելիգենցիան:

Այս արխտոկրատ ինտելիգենցիան չի կարող միանալ բնաւ սօցիալիզմին, աշխատաւոր դասակարգին:

Բայց այդ կարգի մտաւորականների հանդէպ կայ ինտելիգենցիայի մի այլ կատեգորիա, որ մեզ հետ է, և չի կարող մեզ հետ չլինել: Ինտելիգեն-

ցիայի ստորին խառն է այդ:

Այս կարգի ինտելլիգենցիան իր մտայնութեամբ կանգնած է աշխատաւորութեան տեսակէտի վրայ և իր սօցիալական դրութեամբ պատկանում է աշխատաւոր դասակարգին: Ինտելլիգենցիայի այդ կատեգորիան էլ, բանւորի և աշխատաւոր գիւղացու նման, ապրում է իր ճակատի քրտինքի հալալ արդիւնքով, իր օրավարձով, և ոչ թէ յաւելեալ աշխատանքով, ուրիշի աշխատանքը շահագործելով:

Ինտելլիգենցիայի այս մասը միշտ էլ եղել է արդիւնագործական բանւորութեան ու աշխատաւոր գիւղացիութեան հետ և հանդիսացել է նրանց առաջնորդը, աշխատաւորութեան դասակարգային իդէօլօգիայի մշակողը:

Այս կարգի ինտելլիգենցիան է խորապէս գիտակցում տիրող իրաւակարգի, քաղաքական և հասարակական դրութեան բովանդակ և աղաղակող անարդարութիւնը և ամբողջ թափով նետւում պայքարի ասպարէզը ու անխնայ քննադատութեան ենթարկում տիրող կարգը, տիրող հայեացքները, հասարակական և իրաւական հասկացողութիւնները:

Սօցիալիստական և յեղափոխական ինտելլիգենցիան է այս:

Փոքր ոյժ և մեծութիւն էր ներկայացնում յեղափոխական ինտելլիգենցիան անցեալում: Բայց աւսօր նա բոլոր ժողովուրդների և ազգերի մէջ կազմում է մի պատկառելի, հզօր ոյժ և, որ գլխաւորն է, նրա շարքերը արտակարգ արագութեամբ խտանում են նորանոր ինտելլիգենտ ոյժերով: Եւ, շատ բնական է, որ նրա պայքարն էլ հետզհետէ դառնում է աւելի սպառնական, աւելի վտանգաւոր կապիտա-

լիստական դասակարգի համար:

Շատ յաճախ նկատւած է պատմութեան ընթացքում, բոլոր հասարակութիւնների մէջ, որ յեղափոխական ինտելլիգենցիայի շարքերն են մտնում, հետեւապէս, սօցիալիզմին են յարում նոյնիսկ բարձր խաւերից, իշխող դասակարգի մտաւորականներէ: Դրանք բացառիկ դէմքեր են, գլխաւորապէս գիտակից տարրերը, «մտաւոր և բարոյական հեղինակութիւնները» ու մեծութիւնները, ինչպէս շեշտւած է Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագրի մէջ: Այդ տիպի մտաւորականները իրենց մտածողութեամբ արտադասակարգային են: Նրանք գիտակից և խնկաւոր են մտածողներ են, նրանք գերազանցապէս գաղափարական անհատներ են, որ կարող են և ընդունակ են զոհաբերելու իրենց անձնական կեանքը, ազատութիւնը և հարստութիւնը՝ բարձր, հանրային շահերի, աշխատաւոր մարդկութեան ազատագրման ազնիւ գործին: Եւ սօցիալիզմի մի շարք մաքուր, պանծալի դէմքեր և ներկայացուցիչներ հասարակութեան բարձր խաւերից են:

Աւելին կարելի է ասել: Սօցիալիզմը՝ իբր իդէալ՝ չի յղացել բանւորութիւնը: Սօցիալիզմը յղացել է և մշակել յեղափոխական ինտելլիգենցիան՝ իր քննադատական մտքի միջոցով: Այս բանի մէջ համոզւելու համար, բաւական է միայն մի բոլոր վերլուծել սօցիալիզմի կարապետներին, առաջին սօցիալիստներին՝ Բաբեօֆ, Ֆուրիէ, Բօբերտ Օուէն, Սեն-Սիմօն, Լուի Բլան, Պրուդօն, վերջապէս Կարլ Մարքս և Ֆրեդրիխ Էնգելս: Դրանցից մի քանիսը մինչև իսկ լօրդ և իշխան են, գործարանատէր և կապիտալիստ: Բօբերտ Օուէնը, օրինակ, հսկայական գործարան ունէր, մեծա-

քանակ հարստութեան տէր էր:

Սօցիալիզմը միշտ էլ նոր ու նոր ուժեր է գրաւում զոնազան խաւերի ինտելլիգենտների շարքերից և այսպիսով մեծանում է սօցիալիստական ինտելլիգենցիայի հմայքը և ոյժը: Իսկ նրա իսկական յենարանը կազմում են աշխատաւոր մասսաները՝ բանւորութիւնը և գիւղի աշխատաւորութիւնը:

Եւ վերջնական յաղթանակը տանելու են սրանք — յեղափոխական ինտելլիգենցիան, արդիւնագործական բանւորութիւնը և աշխատաւոր գիւղացիութիւնը: Իսկ սրանց յաղթանակը հաւասար է դասակարգերի և դասակարգային կուրի վերացման, քանի որ թաղաւորելու է աշխատանքի սկզբունքը, քանի որ ստեղծելու է աշխատաւոր մարդկութիւն, բոլորն աշխատելու են հաւասար և վայելելու են հաւասար: Գիտութիւնը, այդ ինքնին մեծ ազատարարը, ազատագրւելու է իր ճորտական դրութիւնից, դասակարգային գոյնից և բովանդակութիւնից: Նա այլ ևս չի հանդիսանալու որպէս շահագործման մի գործիք կապիտալիստների, տիրող դասակարգի ձեռքում:

Սօցիալիստական ինտելլիգենցիայի, աշխատաւոր բոլոր մասսաների յաղթանակը բերելու է նոյնպէս զիտութեան մտքի բոլոր ներկայացուցիչների ազատագրումը: Գիտութիւնը ծառայելու է ամբողջ մարդկութեան և հանդիսանալու է յիշաւի մի բարիք, մի գերազոյն բարիք: Գիտութեան մարդկանց, բոլոր կարգի մտաւորականների աշխատանքը դառնալու է գերազանցապէս ստեղծագործական:

Իսկ այս հնարաւոր է միայն սօցիալիզմի թագաւորութեան միջոցին:

XIII

ՍՈՒՐԻԵԿՏԻԻԶՄ ԵՒ ՍՈՒՐԻԵԿՏԻԻ

ՍՕՑԻՕԼՕԳԻԱ

Սուբեկտիւ սօցիոլոգիայի շուրջը յաճախ և կատաղի աղմուկ է եղել, անգամ կըքեր են յուզւել յատկապէս Ռուսաստանում: Այժմ էլ նոյնը շարունակւում է, միայն աւելի մեղմ ձևով: Ընդհարումը տեղի է ունենում գլխաւորապէս մարքսեան սօցիոլոգիայի, մատերիալիստական պատմահայեցողութեան և սուբեկտիւ սօցիոլոգիայի միջև, և յաղթանակը մնում է վերջինի կողմը:

Որո՞նք են սուբեկտիւ սօցիոլոգիայի էական և բնորոշ կողմերը: Սուբեկտիւ սօցիոլոգիայի մի շարք հիմնական դրութիւնների հետ մենք արդէն ծանօթացել ենք, անգամ տւել նրանց հանգամանօրէն վերլուծումը, բայց առանց անունը յիշելու:

Բայց նախքան այդ անհրաժեշտ է պարզել մեր դիրքը սուբեկտիւիզմի վերաբերմամբ: Մեր այս փոքրիկ հասարակագիտական էտիւդներում յաճախ խօսք է եղել սուբեկտիւիզմի մասին, բայց միայն թռուցիկ և անցողակի կերպով:

Ի՞նչպէս հասկանալ սուբեկտիւիզմը:—

Կան նրա տարբեր ըմբռնումները: Շատերը խրատ-
նում են հէնց սուբիեկտիւիզմ տերմինից, առանց
բովանդակութիւնն իմանալու: Անկասկած միանգա-
մայն այլ բան է, երբ մէկը իր գլխից մի սխտեմ է
ստեղծում, երբ իր անձնական մտածումներին վե-
րագրում է իրական գոյութիւն: Այս տեսակի սու-
բիեկտիւիզմը անհող է և ցնորական միանգամայն,
հետևապէս, ոչ մի առնչութիւն չունի իրականու-
թեան, իրական աշխարհի հետ:

Մեր ըմբռնած սուբիեկտիւիզմը, հասարակագի-
տական սուբիեկտիւիզմը անհող և ցնորական չէ, այլ
միանգամայն իրական, ոչալ կեանքի հետ սերտօրէն
կապած:

Մեր ըմբռնած սուբիեկտիւիզմի համար խիստ
բնորոշ է յատկապէս վերաբերմունքի հարցը:—Մեր
տեսակէտով անհնարին է անվրդով և հանգիստ, հե-
տևապէս, բոլորովին օբիեկտիւ կերպով վերաբերել
սօցիալական, քաղաքական, բարոյագիտական փաս-
տերին և երևոյթներին: Այստեղ մենք ցոյց ենք տա-
լիս որոշ վերաբերմունք: Նւ այլ կերպ էլ չի կարող
լինել: Ամեն մի առարկայ, ամեն մի դէպք և երևոյթ
անխուսափելիօրէն առաջ է բերում դէպի իրեն որոշ
վերաբերմունք, սուբիեկտիւ վերաբերմունք, և այլ
կերպ էլ առարկան չի կարող ազդել մարդու, մեզ
վրայ: Մի պայմանով միայն, եթէ մենք ըմբռնում
ենք առարկայի և երևոյթի էութիւնը, եթէ մենք
չենք մոռում կանգնած երևոյթի արտաքին մակերևոյ-
թի վրայ: Մարդիկ յաճախ կրկնում և յանձնարարում
են ուրիշներին այն խիստ բանալ միտքը, թէ «չպէտք
է արտասուել և ծիծաղել, այլ միայն հասկանալ»:
Այս միտքը հասարակական-քաղաքական կեանքում մի

անհեթեթութիւն է միայն, ուրիշ ոչինչ: Զծիծաղել
այն բանի վրայ, ինչ ծիծաղելի է, նշանակում է ուղ-
ղակի չհասկանալ, չարտասուել այնտեղ, ուր արտաս-
ուելու պատճառ կայ, նշանակում է չհասկանալ: Մար-
դը տարւում, ոգևորւում է հասարակական-քաղաքա-
կան փաստերով, դատում և դատում, լալիս է և
խնդում, տանջւում է և յուզւում:

Ահա այս իմաստով վերցրած սուբիեկտիւիզմը,
սուբիեկտիւ տարրը անխուսափելի, անպարսկ և ան-
հրաժեշտ է սօցիոլոգիայի մէջ, հասարակական-քաղա-
քական կեանքի շրջանակում:

Այստեղ արդէն ընդգծւում է սուբիեկտիւ սօ-
ցիոլոգիայի բնորոշ կողմերից մէկը:

Բայց շարունակենք:—

Անհատները, խմբակցութիւնները տպւելով հա-
սարակութեան, սօցիալական երևոյթների բարդ հիւս-
ւածքի մէջ, միշտ էլ երևան են բերում իրենց որոշ
ցանկութիւնները, կամեցողութիւնները և նպատակ-
ները: Իսկ ուր նպատակ կայ—հասարակական երե-
ւոյթների շրջանակում միշտ էլ նպատակներ կան—այն-
տեղ չի կարող չլինել երևոյթների և փաստերի գնա-
հատութիւն, սուբիեկտիւ գնահատութիւն: Մարդ-ան-
հատն ըստ իր էութեան ունի քառոյակաւ գիտակցու-
թիւն և այդ կազմում է նրա անբաժան մասը, նրա
սեփական եւր, բարոյական եւր, որից անկարող է
պոկ գալ: Հէնց այդ բարոյական գիտակցութիւնը
հարկադրում է նրան գնահատել, որոշ վերաբերմունք
սուբիեկտիւ վերաբերմունք ցոյց տալ դէպի փաս-
տերը, երևոյթները, դէպի մարդկանց յարաբերութիւն-
ները, քաղաքական շարժումները:

Այստեղ նա չի բաւականանում նրանով, ինչ

կայ, ինչ տւեալ է, ինչ անգամ ճշմարտութիւնն է, այլ նա ուզում է նոր դրութիւն, նա զնահատում է այդ իր սուբիեկտիւ տեսակէտով, իր հասարակական-քաղաքական իդէալի տեսակէտով:

Ամենուրեք և ամեն ժամանակ մարդկութեան փոքրամասնութեան երջանկութիւնը ձեռք է բերւած հսկայական մեծամասնութեան, ժողովրդի 90—95 տոկոսի, դժբախտութեան զնով:

Մի գիտական ընդհանրացում, գիտական ճշմարտութիւն է այս, մի անհերքելի փաստ, ճշտւած ժողովուրդների պատմութեան մէջ: Եւ մեր մտաւոր գիտակցութիւնը, մեր միտքը ընդունում է այս գիտական դրութիւնը:

Բայց մեր քառոյսկան գիտակցութիւնը, ընդհակառակը, չի հաշտւում այդ դրութեան հետ, որքան էլ նա մի ճշմարտութիւն է, փաստ, պատմական իրողութիւն:

Իսկ ինչո՞ւ. որովհետեւ դա հակասում է մեր առարարներին տեսակէտին, մեր սօցիալական իդէալին: Հասարակութեան գիտակից փոքրամասնութիւնը, քննադատօրէն մտածող անհատները կատաղի պայքար են մղում այդ անարդար, թէև գիտական դրութեան դէմ, աշխատելով հաստատել արդար կարգ, արդար բաշխումն բարիքների: Նրանք ոչ միայն ուզում են գիտնալ հասարակութեան զանազան դասերի մէջ եղած յարաբերութիւնը, այս կամ այն պատմական փաստը կամ ճշմարտութիւնը, այլ, գիտնալուց զատ, նրանք կամենում են ամենից առաջ իրենց հասարակական իդէալի, բարոյականութեան և արդարութեան տեսակէտի իրականացումը կհանքում:

Այս վերլուծումից արդէն երևան են գալիս սու-

բիեկտիւ սօցիօլօգիայի մի շարք դրութիւնները, մի շարք յատկանշական գծեր:—Ամենից առաջ այն, որ ընդունելով սուբիեկտիւ տարրը սօցիօլօգիայի մէջ, մենք բնաւ չենք ժխտում օբիեկտիւիզմը, օբիեկտիւ տարրը: Այդ կը լինէր մի խորին թիւրիմացութիւն և սխալ միանգամայն: Իրար չժխտելով, սերտօրէն միացած են միմեանց հետ այս երկու տարրերը, ինչպէս սուբիեկտիւ ճշմարտութիւնը և օբիեկտիւ ճշմարտութիւնը:

Երկրորդ, այս վերլուծումից հետևում է առարարներին տեսակէտը, որի հետ կապւած է նոյնպէս բարոյականութեան տեսակէտը: Քննադատօրէն մտածող անհատները յետ մղելով այն բոլորը, ինչ բարոյական և արդար չէ, առաջ են մղում ու պաշտպանում են այն, ինչ բարոյական և արդար է: Բարոյականի և արդարութեան կատեգորիաները սօցիօլօգիայի մէջ անհրաժեշտ են և անպայման, ինչպէս սուբիեկտիւ տարրը: Սուբիեկտիւիստական-հասարակագիտական դպրոցի յայտնի ներկայացուցիչներ Լաւրով և Միխայլովսկի սօցիօլօգիան անբաժան գիտութիւն չեն համարում բարոյագիտութիւնից: Այդ երկու գիտութիւնները, սօցիօլօգիան և բարոյագիտութիւնը սերտօրէն կապւած են իրար հետ:

Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների և ղեկավարների համար ևս խիստ յատկանշական է բարոյականի և արդարութեան տեսակէտը: Քր. Միքայէլեանի տեսակէտով, միայն բարոյական մարդիկ կարող են լաւ յեղափոխական լինել. յեղափոխական ասպարէզը շարժատանի համար չէ:

Երրորդ՝ ներգործօնութիւնը: Անհատները և հասարակական խմբակցութիւնները միշտ էլ ներգործօն,

ակտիւ մասնակցութիւն ունեն հասարակական-քաղաքական երևոյթներ մէջ, ձգտելով իրենց իդէալի, սուբիեկտիւ պահանջների համաձայն ուղղութիւն և ձև տալ շարժումներին ու երևոյթներին: Առանց այդ ակտիւ գործունէութեան անհասկանալի է հասարակական կեանքը:

Եւ չորրորդ, այդ վերլուծումից հետևում է նպատակաքանական տեսակէտը հասարակագիտութեան մէջ, բայց սուբիեկտիւ նպատակաքանութիւնը (տեւէօլօգիա), որ իրական մարդու տեսակէտն է փաստապէս: Առանց որոշ նպատակների անհասկանալի է հասարակական կեանքը: Հասարակական-քաղաքական կեանքի շրջանակում միշտ էլ կան նպատակներ: Անհատների և խմբակցութիւնների ակտիւ մասնակցութիւնը հէնց այն իմաստն ունի, որ դնում են որոշ նպատակներ և աշխատում են այդ նպատակներն իրագործել կեանքի մէջ: Մարդակենտրոն տեսակէտն է տիրապետող հասարակագիտութեան մէջ, և առհասարակ: Այդ նշանակում է, որ մարդն է միշտ էլ իրեն զգում ամեն ինչի կենտրոն, և ամեն ինչ մարդու համար է: Չկայ արդարութիւն լոկ արդարութեան համար, հարստութիւն՝ հարստութեան համար, ճշմարտութիւն՝ ճշմարտութեան համար: Կայ միայն արդարութիւն, հարստութիւն և ճշմարտութիւն մարդու համար:

XIV

ՊԱՏՄԱԿԱՆ ՐԷԱԼԻԶՄ

Պատմական Րէալիզմի տեսակէտի վրայ է կանգնած Հայ Յեղ. Դաշնակցութիւնը:

Պատմական Րէալիզմը խիստ արագ նւաճումներ է անում և, ընդհակառակը, զգալի կերպով յետ են մղում միւս պատմահայեցողութիւնները—պատմական իդէալիզմը և պատմական մատերիալիզմը:

Այդ է ցոյց տալիս մտքի յարաճուն զարգացումը՝ մի կողմից և հասարակական կեանքը՝ միւս կողմից:

Պատմական Րէալիզմի մի քանի հիմնական թէզերի հետ արդէն ծանօթ ենք և մենք այդ տեսակէտով ենք մօտեցել երևոյթների լուսաբանութեան:

Ո՞րոնք են պատմական Րէալիզմի կամ, որ միևնոյնն է, Րէալիստական պատմահայեցողութեան, հիմնական դրութիւնները:—

Պատմական Րէալիզմի ելակէտը կազմում է պատմական պրօցեսը իր ամբողջական ընթացքի մէջ. նա միակողմանիօրէն չի դիտում այդ ամբողջական պրօցեսի այս կամ այն բաղկացուցիչ տարրը, համարելով այդ պատմական էւօլիւցիայի միակ առաջ-մղիչ ոյժը, մի բան, որը կազմում է միւս պատմահայե-

ցողութիւնների շեշտած յատկութիւնը:

Րէալիստական պատմահայեցողութիւնը գերծ է այդ միակողմանիութիւնից: Նա դիտում է բոլոր գործօնները, աւելի ճիշտ բոլոր տարրերը իրենց ընդհանուր կապակցութեան, ընդհանուր զարգացման մէջ: Նա չի դատում այս կամ այն տարրը, որ մի բռնագրօսիկ և հիւանդազին ապերացիա է, և տալիս նրան առաջնական նշանակութիւն: Րէալիստական պատմահայեցողութիւնը շեշտում և ճանաչում է այդ բազմապիսի տարրերի իրարպատկանելիութիւնը և փոխադրեցութիւնը: Այդ պատմական բազմազան տարրերը կամ գործօնները, ինչպէս՝ իդէա և տնտեսութիւն, աշխարհագրական դիրք և միտք, մասսաններ և անհատներ, կօլլեկտիւ և անհատական կամեցողութիւններ, մօրալ և գեղարւեստ, կրօն և փիլիսօփայութիւն, րասսա և կլիմայական դրութիւն—այս բոլոր տարրերը գտնւում են յաւիտենական փոխադրեցումի առնչութեան մէջ: Նրանք փոխադարձաբար իրար որակում և պայմանաւորում են: Այդ տարրերը միշտ էլ երևան են գալիս միասին պատմական զարգացման մէջ, միասին որակում պատմութիւնը և առաջնորդներ հանդիսանում: Այս տարրերը առհասարակ այնպէս զուգաւորւած և շաղկապւած են պատմական ընթացքի, պատմական զարգացման մէջ, որ ուղղակի անհնարին է գատել նրանց և իւրաքանչիւրի դերը գատ-գատ գնահատել:

Վերցնենք, օրինակի համար, ապրանքային արտադրութիւնը:—

«Սօսելով ապրանքային արտադրութեան մասին, —ասում է Չերնով իր «Фил. и соц. этюды» աշխատութեան մէջ—իբր քաղաքատնտեսութեան օրինակով,

մենք գործ չունենք երբէք տնտեսական սուբստանցի մաքուր բիւրեղի հետ, որը չը պարունակէր իր մէջ ուրիշ խառնուրդ, ոչ մի գրան իրաւական կամ հոգեբանական տարր: «Ապրանքային արտադրութիւնը» հասկացնում է բուրժուական սեփականութիւն և նրա հետ կապւած իրաւական հաստատութիւնների գոյութիւնը—ժառանգականութիւն, գնում-վաճառում, և այլն: Ապրանքային արտադրութիւնը կատարւում է իրաւական որոշումների շրջանակում և առանց նրանց անկարելի է, Բացի դրանից, ապրանքային արտադրութիւնը հասկացնում է նաև սօցիալական հոգեբանական երևոյթների մի ամբողջ շարք, և այդ իրաւական օրէնքները և սօցիալ-հոգեբանական երևոյթները չեն ներկայանում իբր արդիւնք ապրանքային արտադրութեան, այլ մի և անբաժան ամբողջութիւն նրա հետ: Նրանք մէկը միւսով փոխադարձաբար հասկացւում և պայմանաւորւում են: Այսպիսով, ոչ ապրանքային արտադրութիւնն ինքնուրոյն է անկախ գոյութիւն ունի an und für sich, ոչ մասնաւոր սեփականութիւնը՝ սրա սովորական տկստւորների հետ, ոչ էլ մանր բուրժուական անհատականութիւնը, այլ գոյութիւն ունի որոշ սօցիալական դրութիւն, որի մէջ անբաժան ձուլւած են և՛ սա, և՛ միւսը, և՛ երրորդը»:

Բայց, միւս կողմից, մենք չենք բացասում անտարակոյս այն փաստը, որ կարող է մի պատմական երևոյթի մէջ կամ մի դարաշրջանում այս կամ այն տարրը համեմատաբար աւելի գերակշռող լինել, աւելի մղել դեր խաղալ, քան միւս տարրերը: Բայց չի կարող երբէք միայնակ, բացարձակ գերիշխողը, բացառապէս գոյն տուողը լինել, իսկ միւսները միայն

պատմական անիւի ետեից ընթացող ոչնչութիւններ, սուերներ: Երբէք: Փաստն այն է, որ ոչ թէ այս տարրերից այս կամ այն է որակում պատմական է-ւօլիւցիան, այլ բոլոր տարրերի գումարը, միութիւնը:

Ուրեմն, բէալիստական պատմահայեցողութեան համար գոյութիւն չունեն—և չեն կարող գոյութիւն ունենալ—տնտեսական, իրաւական, իդէօլոգիական երևոյթներ զատ-զատ, ամեն մէկը իր համար, այլ գոյութիւն ունեն սօցիալական-քաղաքական պրօցես-ներ, որոնց մէջ գուգորդած են բոլոր տարրերը: Պատմական յեղաշրջումների աղբիւրները պէտք է որոնել ոչ թէ սօցիալական զարգացման մի կողմի մէջ, այլ երկու կողմերի փոխազդեցութեան՝ իդէայի և տնտեսութեան, միջավայրի և անհատի, կօլլեկտիւ և անհատական կամեցողութիւնների, բնագիտական-մե-խանիքական պատճառականութեան և սօցիալ-պատմա-կան պատճառականութեան մէջ, և այլն, և այլն: Այս տեսակէտն է ահա կամաց-կամաց տիրապետող դառնում, և աւելի ու աւելի մշակում և հիմնաւոր-ւում:

Ռուս սօցիօլոգիական դպրոցը, Չերնիշևսկու, Հերցենի, Լաւրովի և Միխայիլովսկու դպրոցը, վեհօրէն ազատ մնաց երևան հանւած միակողմանիութիւններից և մշակեցին մի բէալիստական, բովանդակ պատմա-կան պրօցեսն ընդգրկող պատմափիլիսօփայութիւն:

Բէալիստական պատմահայեցողութեան տեսակէ-տի վրայ է կանգնած նաև յայտնի պատմաբան և պատմափիլիսօփա Լիգները, որ իր տեսակէտը բնո-ւորում է իբրև «պատմական պսիխօփիզիքիզմ»: Տար-րերի փոխազդեցութիւնն է ընդունում նաև ականա-ւոր սօցիօլոգ-փիլիսօփա Զիմէլը: Դէպի բէալիստա-

կան պատմահայեցողութիւնը դիմելու շեշտած տե-ղենց են ցոյց տալիս և՛ մի շարք պատմական մատե-րիալիստներ:

Ինչպէս սկզբում յիշեցինք, բէալիստական պատ-մահայեցողութեան տեսակէտի վրայ կանգնած է նոյն-պէս Հայ. Յեղ. Դաշակեցութիւնը: Գր. Միքայէլեա-նի ամեն մի գրածքի հիմքում դրած է այդ տեսա-կէտը: Ահա նրա «Ամբոխային տրամաբանութիւնը», «Պատմական յարիփը», անգամ «Հայ-փրկական յարա-բերութիւնը» փոքրիկ աշխատութիւնը: Նա խնամքով հրապարակ է դնում պատմական երևոյթը պայմանա-ւորող բոլոր պատճառները, վերլուծման ենթարկում և գիտականօրէն որոշում իւրաքանչիւրի դերը: Նա դիտում է երևոյթը իր ամբողջական ընթացքի մէջ, բոլոր տարրերով:

* * *

Այսպէս, պատմական զարգացմանը մասնակցում են բազմապիսի գործօններ, աւելի ճիշտ, տարրեր: Այս տարրերը կարելի է՝ ըստ իրենց բովանդակու-թեան՝ բաժանել երկու որոշ խմբակցութեան — տըն-տեսական և իդէօլոգիական: Դա, այսպէս ասած, տարրերի կլասսիֆիկացիան է, դասակարգումն: Առա-ջին խմբակցութեան տակ հաշւում ենք այն բոլորը, ինչ պատկանում է միջավայրին-բնութեան՝ բնական պայմաններ և երևոյթներ, հողի յատկութիւնը և ձևը, կլիմա, տնտեսութիւն, աշխարհագրական դիրք, իսկ երկրորդ խմբակցութեան տակ հասկանում ենք այն, ինչ մարդն է կրում—գիտակցութեան ձևեր՝ իդէա, մօրալ, գիտութիւն, փիլիսօփայութիւն, իրաւունք,

հոգեբանութիւն, կրօն, քաղաքական կազմ, քաղաքականութիւն: Ուրեմն, մատրոն և միջնադարն են սկզբնապատճառները: Մարդը և միջավայրը յաւէտ գտնուում են փոխյարաբերութեան և փոխազդեցութեան մէջ, իրար փոխադարձաբար որակում և պայմանաւորում: Նրանք փոխադարձաբար իրենց գոյութեանը իմաստ են տալիս: Չկայ և անիմաստ է միջավայրը առանց մարդու: Եւ, միւս կողմից, անամէջ է մարդը առանց միջավայրի: Սրանց մէջ ճիշտ նոյն յարաբերութիւնն է, ինչ օբեկտի և սուբեկտի: Մարդը և միջավայրը ու նրանց միջև եղած այդ փոխյարաբերութիւններն են կազմում փաստապէս պատմական երեւոյթների ամբողջական բովանդակութիւնը: Նրանցից դուրս տեղի չի ունենում—և չի կարող տեղի ունենալ—պատմական երեւոյթ: Մարդը կազմում է պատմութեան սուբեկտիւ, իսկ միջավայրը՝ օբեկտիւ կողմը: Բայց սրանք բաժան, զատ-զատ մեծութիւններ չեն ներկայացնում, այլ, ընդհակառակը, կազմում են մի մեծութիւն, մի մեծութիւն՝ ճիշտ այն հասկացողութեամբ, ինչպէս ըմբռնում են Մալս-Աւենաւրի ուր ֆիզիքականը և հոգեկանը—սոսիոսօփիզիզիզմը: Ի՞նչպէս են ձևակերպում նրանք այդ ըմբռնումը: Նրանք ընդունում են ֆիզիքականը և հոգեկանը անհատի օրգանիզմի մէջ անքակտելի կերպով կապւած. նրանք մի մեծութիւն են: Եւ յիշուի, անկարելի է փաստապէս բաժանել մարդու հոգեկանը՝ ֆիզիքականից. այդ անբաժանելին է: Մարդը ներկայանում է իրականապէս կրողը ֆիզիքականի՝ տեսանելի, ըմբռնելի իրերի, և հոգեկանի՝ պատկերացրած մտածողութիւնների:

Նոյն հասկացողութիւնը և՛ առհասարակ: -- Ֆիզի-

քականը և հոգեկանը կազմում են բաղկացուցիչ մասերը միևնոյն պրօցեսի: Այստեղ ճանաչուում է մի միակ մեծութիւն, որի մէջ միացած և համակարգւած են այդ տարրերը:

Այս մեծութիւնը անւանում է Ռիխարդ Աւենաւրի ուր «երրորդ»: «Ես ճանաչում եմ ոչ ֆիզիքականը և ոչ հոգեկանը, այլ մի «երրորդ», նկատում է նա, մի երրորդ, որ ինքնին ոչ այս է և ոչ այն, այլ երկուսը միասին:

Բայց այդ «երրորդ» կոչւածը մետաֆիզիկ մտքի արգասիք չէ, այլ մի ընթաց, մեզ ծանօթ մեծութիւն: Այդ մեծութիւնը կրողն է ֆիզիքականի և հոգեկանի, այն, կրողն, բայց ոչ միացումն: «Միացում» բառը՝ ըստ մեր մտածելակերպի և աշխարհայեցողութեան՝ ոչ միայն թերի և անյաշող բնորոշիչ է մեր տեսակէտի, այլ մինչև իսկ սխալ: Այդ կը լինէր յիշուի դուալիզմ, եթէ ոչ դուալիզմ, գէթ աւելի մօտիկ դուալիզմին, քան մօնիզմին: Իսկ մեր աշխարհայեցողութիւնը, մեր մտածողութիւնը մօնիստական է:

Մենք չենք ճանաչում ֆիզիքականի և հոգեկանի «միացումն», ոչ էլ երկու «բաժանելի կողմերի միութիւն», որովհետև նրանք՝ ֆիզիքականը և հոգեկանը, ըստ մեր ըմբռնողութեան, երբեք բաժանւած չեն եղել, որ կարիք լինէր նրանց «միացնելու», մի «միութեան» մէջ դնելու: Իսկզբանէ անտի այդ երկուսը եղել են միասին, միատեղ, և կազմել են մի մեծութիւն՝ անբաժանելի, անքակտելի:

Ահա մեր մօնիզմը, մեր մօնիստական տեսակէտը:

Ոչ թէ ֆիզիքականի և հոգեկանի միացումն է ար-

գիւնք մարդկային մտքի յեւագայ անալիզի և հետազօտութեան, այլ, ընդհակառակը, նրանք սկզբնօրէն միացած են եղել, իսկ բաժանումը խիստ բռնազբօսիկ է և ոչ-գիտական: Եւ այդ բաժանումը հնարաւոր է միայն in abstracto:

Հոգե-ֆիզիքական պարալլելիզմի ճիշտ նոյն ալդըմբոնումն ունենք նոյնպէս մարդկային հասարակութեան տնտեսական և մտաւոր կեանքի, իդէօլօգիայի և էկօնօմիկայի միջև եղած յարաբերութեան վերաբերմամբ:

Տնտեսա-իդէօլօգիական պարալլելիզմը, պսիխօ-ֆիզիցիզմի վերև շեշտած իմաստով, կիրառում ենք հասարակագիտութեան մէջ:—Ինչպէս որ ֆիզիքականը և հոգեկանը անբաժանելի կերպով միացած են անհատի մէջ և ընդհանրապէս, նոյնպէս և միևնոյն հասկացողութեամբ շաղկապւած են հասարակական երևոյթներին, պատմական պրօցեսի մէջ տնտեսական և իդէալական տարրերը—իդէօլօգիան և տնտեսութիւնը: Եւ այս երկու գործօնների վրայ են բարձրանում երկու՝ ըստ երևոյթին իրար տրամադծօրէն ջնջող և հակամարտ՝ պատմահայեցողութիւններ—իդէալիստական և մատերիալիստական: Իդէալիստական և մատերիալիստական պատմահայեցողութիւնները մասնաւորապէս, և իդէալիստական ու մատերիալիստական մտայդացումներն ընդհանրապէս, յիշուի, արդիւնք են այն թիւր և հիմնօրէն սխալ ըմբռնումի, որ ունեն նրանց հիմնադիրները և ներկայացուցիչները իդէօլօգիայի և տնտեսութեան, գիտակցութեան և իրականութեան (sein), մտքի և օբիեկտի, իդէայի և մատերիայի յարաբերութեան մասին:—

Նրանք բռնազբօսիկ կերպով գատել, բաժանել

են այդ՝ իսկզբանէ անտի միացած տարրերը, գերազնահատել այս կամ այն, դարձնելով մէկը պատճառ և առաջնական, իսկ միւսը հետևանք և երկրորդական, և այսպիսով հիմնաւորել իրենց պատմահայեցողութիւնը, իրենց փիլիսօփայական վարդապետութիւնը: Ուրեմն, այդ սկզբնական դոքտրինից, սկզբնական միակ մեծութիւնից և հիմունքից են ծագել, ճիւղաւորել իդէալիստական և մատերիալիստական աշխարհայեցողութիւնները, ինչպէս և պատմահայեցողութիւնները: Իսկ այդ սկզբնական դոքտրինը, այդ միակ մեծօքտրինն է կազմում մեր ընտելիստական պատմահայեցողութեան հիմնաժայռը, նրա անկիւնաքարը:

Հետևապէս պատմական ընտելիզմը չի ներկայանում պատմական իդէալիզմի և պատմական մատերիալիզմի յետագայ միացումը, ինչպէս ոմանք արտայայտում են, այլ, ընդհակառակը, դրանք հէնց սկզբից միացած են եղել մի ամբողջութեան մէջ. նրանց հիմքը մեկ է:

Ահա ինչպէս ենք հասկանում հոգե-ֆիզիքական, ինչպէս և տնտեսա-իդէօլօգիական պարալլելիզմը:

Բայց մենք դեռ ասելիք ունենք պարալլելիզմի մասին, թէ և անուղղակի, որով աւելի և վերջնականապէս կը պարզւի մեր դիրքը: Մեր ասելիքը վերաբերում է պատճառականութեան և առաջնութեան հարցին:

* * *

Այս երկշարք տարրերը՝ ֆիզիքական և հոգեկան, տնտեսական և իդէօլօգիական, գտնւում են փոխաբարբերութեան, փոխազդեցութեան մէջ:

Այս մենք արդէն գիտենք:

Բայց այս չէ մեզ այժմ զբաղեցնողը: «Յարաբերութիւն» և «առնչութիւն» այդ տարրերի միջև ընդունում են բոլոր ժամանակակից մտածողները, բոլոր հասարակական հոսանքները:

Բայց ի՞նչպիսի յարաբերութեան, ի՞նչպիսի առնչութեան մէջ են գտնուում այդ շարքերը:

Ահա այս հարցի շուրջը բաժանուում են կարծիքները: Այդ երկշարք տարրերի մէջ տեղի է ունենում արդեօք պատճառականութեան մի ակտ, թէ՞ մի այլ տեսակի յարաբերութիւն:

Առաջին դէպքը անընդունելի է: Պատճառականութեան հին ըմբռնումը բացասումն է միջնայժամ զարգացրած և անցկացրած հիմնական տեսակէտի ու մտածողութեան: Պատճառականութիւնն ենթադրում և շեշտում է պատճառի և հետեանքի ակտը: Նա չի ճանաչում և ընդունում ֆիզիքականի և հոգեկանի, անտեսութեան և իդէօլօգիայի հաւասար արժէքը: Նա մէկը համարում է առաջնական, միւսը՝ երկրորդական: Իսկ այս դրութիւնը մենք արդէն մերժել, բացասել ենք:

Ուրեմն, ի՞նչ բնաւորութիւն է կրում նրանց միջև տեղի ունեցած ակտը, յարաբերութիւնը:

Մենք մինչև այժմ գործ էին անում «համարժէքութիւն», «իրար-պատկանելիութիւն» որոշիչները, որոնցով ուզում էինք բնորոշել մեր տեսակէտը: Այժմ գալիս ենք տալու այդ յարաբերութեանը նոր որոշիչ, որը է՛լ աւելի կը պարզի նրա իմաստը:

Փունկցիայի հասկացողութիւն է այդ, մաթեմատիքական իմաստով, որ շատ հանճարեղ կերպով կիրառում են Աւենարիուս և Մախ:

Ինչո՞ւմ է կայանում ֆունկցիայի, ֆունկցիօնել յարաբերութեան սկզբունքը և էութիւնը: —

Այդ սկզբունքը չէ ընդունում երկու շարքերի միջև պատճառի և հետեանքի ակտ. նա ճանաչում և շեշտում է միմիայն տարրերի մէջ ֆունկցիօնել յարաբերութիւն: Օրինակ, եթէ փոխում է *a*, անպայմանօրէն փոխում է նաև *B*, և ընդհակառակը. *B*-ի փոփոխութիւնը *a*-ի փոփոխութեան մի ֆունկցիան է, և ընդհակառակը:

Ինչ համեմատութեամբ, օրինակ, մեծացնում ենք մի շրջանի հարթութիւնը, նոյն համեմատութեամբ էլ մեծանում է շրջանի շառաւիղը և, ընդհակառակն, ինչ չափով փոքրացնում ենք շառաւիղը, նոյն չափով անպայմանօրէն փոքրանում է նաև շրջանի հարթութիւնը: Այստեղ շրջանի հարթութեան փոփոխութիւնը շառաւիղի փոփոխութեան մի ֆունկցիան է և, ընդհակառակն, շառաւիղի փոփոխութիւնը շրջանի հարթութեան փոփոխութեան մի ֆունկցիան է: Այստեղ, ինչպէս պարզ տեսնում էք, չը կայ պատճառ և հետեանք, քանի որ անհնարին է մատնանշել և պնդել, թէ որն է պատճառ և որը՝ հետեանք: Այստեղ մենք գործ ունենք փաստապէս մի մեծութեան հետ:

Նոյն այս երևոյթին ենք ականատես նաև հոգեկան, ինչպէս և անտեսական-հասարակական կեանքի գործօնների, աւելի ճիշտ, տարրերի մէջ, այն տարբերութեամբ միայն, որ հասարակական կեանքում, պատմական երևոյթների մէջ տարրերի յարաբերութիւնը և կախումը շատ աւելի բարդ, բազմապիսի է, քան երկրաչափական մեծութեան մէջ:

Եսը և միջավայրը, առաջինն՝ իր բազմապիսի

յղացումներով և տարրերով՝ իդէա, միտք, գիտութիւն, իրաւունք, մօրալ, փիլիսօփայութիւն, և երկրորդը՝ իր բազմազան բաղկացուցիչ մասնիկներով — հող, աշխարհագրական դիրքը, կլիմա, անտեսութիւն, գանձուած են ֆունկցիօնել յարաբերութեան, ֆունկցիօնել կախումի մէջ: Մէկ տարրի փոփոխութիւնը ուղեցկւում է անպայմանօրէն միւսի փոփոխութեամբ. չի կարող մէկը փոխւել, առանց միւսը փոխւելու: Ամեն տեղ գործ ունենք ֆունկցիօնել կախումների և յարաբերութիւնների հետ: Եւ մենք հենց զբաղուած էլ բաւականանում ենք: Մենք չենք հարցնում, թէ ինչպէս, ինչ կերպ են միացած ֆիզիքականը և հոգեկանը, իդէական և նիւթական տարրերը: Հարցի այդ ձևով դնելը մեզ շատ հեռուն կը տանէր և կը նետէր անտարակոյս մետաֆիզիկայի գիրկը: Մենք շեշտում ենք, այո, միայն տւած յայտնի փաստը, այսինքն նրանց ֆունկցիօնել կախումը, մի դրութիւն, որ, ինչպէս ասացինք, գիտական փորձով հաստատուում և ապացուցւում է:

Ֆունկցիօնալիտետի սկզբունքը, որը վաղուց ի վեր կիրաւուել էր — և շատ արդիւնաւոր էր եղել — ֆիզիքայի, հոգեբանութեան, բիօլօգիայի մէջ, անխուսափելիօրէն և անհրաժեշտօրէն պիտի գտնէր իր գործադրութիւնը նաև սօցիօլօգիայի, մէջ, որ այժմ իրական փաստ է:

Ֆունկցիայի սկզբունքը հիմնօրէն ջնջում է նաև առաջնութեան պրօքլեմը: — Պատմական պրօցէսի տարրերից մէկը չի ներկայանում իբր պատճառ, միւսը՝ հետևանք, մէկ՝ առաջնական, միւսը՝ երկրորդական, մէկը՝ պարզ, միւսը՝ պասիւ: Նրանք համարժեք են մշտական փոխադրեցութեան մէջ:



ՀԵՂԻԱԿԻ ԳՐԱԾԲՆԵՐԸ

- 1) Ասրլասական, (սպառնաժ) . . . 1 r. 50 կ.
- 2) Պատմափիլիսոփայութիւն . . . 30 կ.
- 3) „ՄԻՏԲ“ Գիտական-փիլիսոփայական
ժողովածո 1 r. 50 կ.
- 4) Նիզըն եւ նրա փիլիսոփայութիւնը
(սպառնաժ) 20 կ.
- 5) Պատմափիլիսոփայական (Զօյքե-
հատեր եւ նրա փիլիսոփայութիւնը) . 50 կ.
- 6) Միլալալսկիի որպէս փիլիսո-
փա-սօցիօլոգ 60 կ.
- 7) N. Michailowsky als Philosoph und
Soziolog, Berlin, 1 r. 50 կ.
- 8) Յռնական փիլիսոփայութիւն . . . 25 կ.
- 9) Գերմաներէնից-հայ. բառար . . . 1 r.
- 10) Քր. Միլալեւան 50 կ.
- 11) Հասարակագիտական եփնդներ 1 r. 50 կ.

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 ԿՈՊ.

ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՍՏԷՆ՝

Редакция „Аревь“

Е. Франгану

ՀՀ Ազգային գրադարան



NL0202464

